Azg Ազգ

18 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2010 ՇԱԲԱԹ 234(4614)

ISSN: 1829-1651

Հայազգի լրագրողը դատապարտվեց 15 տարվա ազատազրկման

Մոլդովայի օգտին լրտեսության մեջ մեղադրվող հայազգի լրագրող Էռնեստ Վարդանյանը դեկտեմբերի 16-ին Մերձդնեստրի դատարանի վճռով դատապարտվել է 15 տարվա ազատազրկման: Այս մասին տեղեկացնում է «Ազատություն» ռադիոկայանը: Հիշեցնենք, որ Վարդանյանը այս տարվա ապրիլի 7-ին ձերբակալվել է Մերձդնեստրում՝ «լրտեսություն եւ պետական դավաճանություն» մեղադրանքով: Վարդանյանը եւ նրա մտերիմներն ու գործընկերները հերքում էին բոլոր մեղադրանքները: Մի քանի ամիս առաջ հայազգի լրագրողը կարողացավ բանտից հայտարարություն անել, որում ընդգծել էր. «Եթե նույնիսկ ես հայտարարեմ, որ լրտեսություն եմ արել, չհավատաք, դրանում ստիպել են ինձ»: Հավելենք նաեւ, որ վերոհիշյալ մեղադրանքով Վարդանյանին սպառնում էր 12-20 տարվա ազատազրկում:

Հ. Ա.

Ուղղակի եւ փոխաբերական իմաստով կուտակված աղբի մասին, որը պետք է մաքրել

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

«Արդյո՞ք Հայաստանի Հանրապետության թիվ մեկ խնդիրն այսօր աղբահանությունն է: Կարծում եմ, որ Հայաստանի սոցիալական լրջագույն պրոբլեմներից մեկը աղքատության եւ աղբի միջից սննդամթերք հայթայթելու՝ մուրացկանության խնդիրն է: Այսինքն՝ այսօր մենք պետք է ննջարկենք ոչ թե աղբահանության խնդիրը, այլ այնպիսի լրջագույն հիմնախնդիրներ, ինչպիսիք են արտագաղթի, դեմոգրաֆիայի, աղքատության, սպասարկման ոլորտի դեմ պայքարի խնդիրները եւ այլն: Եվ երկրում ստեղծվել է մի իրավիճակ, որ որոշակի զանգված իր ունեցվածքը աղբի տեսքով շրջում է դուրս, իսկ որոշակի մարդիկ սնվում են հենց դրա հաշվին: Այսինքն՝ կա երկու Հայաստան՝ աղբից սննդամթերք հայթայթողների Հայաստան եւ Հյուսիսային պողոտայի գերեզմանային լռության Հայաստան՝ իբր շքեղ Հայաստան, ո՞վ պետք է մտածի այս կոնֆլիկտի մասին, սա երկրի համար ամենավտանգավոր երեւույթն է»: Կարծում եք այս տողերի հեղինակը սոցիալական թեմայով գրող որեւէ լրագրո՞ղ է կամ սոցիալական գաղափարախոսությամբ կուսակցության ներկայացուցչի՝ հասարակության ակնջին հաճելի ելո՞ւյթ: Ոչ, սա անկախ պատգամավոր **Վիկտոր Դալլաֆյանի** խոսքն է, առիթը՝ «Աղբահանության եւ սանմաքրման օրենքի»՝ երկրորդ ընթերցմամբ ննջարկվող փոփոխությունների նախագիծն էր, որ իր բազմաձավալ փաթեթների շարքում արտահերթ նիստի էր ներկայացրել կառավարությունը: Վիկտոր Դալլաֆյանը Ազգային ժողովում շարունակեց երեկ այս ոգով իր ելույթը, նշելով, որ ՀՀ-ում պաշտոնապես 900 հազ. քաղաքացի աղքատ է, իսկ 100 հազարն ավելի աղքատ, մոտ 1 մլն մարդ՝ պաշտոնական տվյալներով աղքատ է ՀՀ-ում. «Այսինքն՝ երկրում եւ ուղղակի, եւ փոխաբերական իմաստով կուտակվել է մեծ քանակությամբ աղբ՝ տարբեր բնագավառներից, եւ բիզնեսից, եւ քաղաքականությունից, եւ գիտությունից, եւ պետք է տեղափոխել, կամ պատկերավոր ասած՝ մաքրել երկրի ավգյան ախոռները: Այդ հարցերը պետք է ննջարկենք: Այդ աղբի վայրերը մուրացկանների կողմից զոնաների են բաժանված, այսինքն՝ ազդեցության ոլորտների: Եվ այս պայմաններում ակադեմիական ննջարկումներ կազմակերպել, լուրջ դեմքերով, ես ուղղակի անհասկանալի եմ համարում: Հայաստանում կարող է տեղի ունենալ սոցիալական պայթյուն, իսկ Հայաստանը գտնվում է աշխարհաքաղաքական բարդագույն վիճակում եւ նիրհող պատերազմում», եզրափակեց Դալլաֆյանը՝ նշելով, որ այս տեսքով դեմ է քվեարկելու նախագծին: Նշենք, որ նախագծով եւ հարակից փաթեթով, արդարադատության փոխնախարար **Նիկոլայ Առուստամյանի** ներկայացմամբ, բնակարաններում հաշվառված անձանցից յուրաքանչյուրի համար առավելագույն ամսական 500 դրամ աղբահանության վարձ է սահմանվում, իսկ եթե տվյալ հասցեում հաշվառված անձ չկա՝ մեկ անձի դրույքաչափով: Ըստ անշարժ գույքի մակերեսի էլ առավելագույնը 50 դրամ է սահմանվում:

Տես էջ 2

ԱՎԱԳԱՆԻՆ ԸՆՏՐԵՑ ՆՈՐ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ

«Կադրային ջարդ չի լինի, բայց կլինեն խաղի կանոններ»

Կարեն Կարապետյանը՝ Երեւանի 53-րդ քաղաքապետ

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առանց որեւէ տիաճ միջադեպի ու անակնկալի, հանգիստ մթնոլորտում, երեկ հաստատվեց այն, ինչի մասին արդեն մի քանի օր գրում էր մամուլը: 50 կողմ, 1 դեմ ձայների հարաբերակցությամբ Երեւան քաղաքի ավագանին «Հայռուսգազարդի» տնօրեն Կարեն Կարապետյանին ընտրեց Երեւանի քաղաքապետ: Հիշեցնենք, որ Երեւանի արդեն նախկին քաղաքապետ Գագիկ Բեգլարյանին ստիպել էին հրաժարականի դիմում ներկայացնել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի աշխատակազմի արարողակարգի բաժնի աշխատակից Արամ Կանդայանին ծեծելու համար:

Ընտրապայքարի սրություն եւ մրցակցություն որպես այդպիսին չկար, որովհետեւ ԲՀԿ-ն քաղաքապետի պաշտոնում թեկնածու չէր առաջադրել՝ հիմնավորմամբ, որ ՀՀԿ-ն ավագանու կազմում մեծամասնություն է կազմում:

Հետեւաբար, մեկ թեկնածուի պարագայում, եթե անգամ ԲՀԿ-ն դեմ քվեարկեր, Կարապետյանը կդառնար քաղաքապետ:

«Շնորհակալություն վստահության համար, ամեն ինչ կանեմ՝ արդարացնելու ձեր վստահությունը: Կարծում եմ՝ կկարողանամ ներմուծել մունիցիպալ կառավարման նոր մշակույթ, որից գոհ կլինեն մեր բնակիչներն ու քաղաքի հյուրերը», ասաց Կարապետյանը՝ խոստանալով Երեւանը դարձնել ժամանակակից քաղաք՝ իր ձեռագրով:

Առաջին քայլը քաղաքապետի պաշտոնը ստանձնելն է: Մոտ ժամանակներում էլ կներկայացնի քաղաքի զարգացման նոր ծրագիր:

«Կլինի՞ արդյոք վարչական շրջանների ղեկավարների փոփոխություն» հարցին նորընտիր քաղաքապետը պատասխանեց հետեւյալ կերպ. «Կադրային ջարդ, ցեղասպանություն մայրաքաղաքում չի լինի: Բայց կլինեն խաղի կանոններ ու կլինեն պահանջներ կառավարիչների նկատմամբ: Ովքեր այդ պահանջներին կդիմանան, կմնան, ովքեր՝ ոչ, կգնան»:

Թե ո՞րն է ավելի հոգեհարազատ՝ «Հայռուսգազարդի» ղեկավար լինելը, թե՞ Երեւանի քաղաքապետ, Կարապետյանը ասաց, որ սիրում է «Հայռուսգազարդը»՝ այն համարելով երկրի լավագույն ընկերություններից:

«Բայց երեւի յուրաքանչյուր կառավարիչ ժամանակ առ ժամանակ կարիք ունի իր ոլորտը փոխելու, թարմ աչքով նայելու: Իսկ ընդհանրապես կառավարման գիտությունը նույնպես գիտություն է, եւ հստակ բան է, երբ կարողանում ես առարկան մոդելավորել՝ ինչ պետք է կառավարես, շատ հավանական է, որ օպտիմալ լուծումներ կգտնես»:

Տես էջ 2

Տին տարի, նոր նախարարներ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության պետ **Վազգեն Խաչիկյանի** պաշտոնանկության ոդիսականը կարելի է ավարտված համարել: Վարչապետ Տիգրան Սարգսյանի որոշմամբ նա ազատվել է պաշտոնից:

Շուրջ մեկ ամիս Խաչիկյանը մամուլում եւ սոցիալական ցանցերում ամենից շատ ննջարկվող քաղաքական գործիչն էր: Նրա պաշտոնանկության վերաբերյալ կային բազմաթիվ վարկածներ ու տարաբնույթ մեկնաբանություններ:

Լուրեր էին պտտվում, որ սոցիալական ապահովության պետական ծառայությունում ՀՀ Վերահսկիչ պալատի իրականացրած ստուգումներով բացահայտվել են աղաղակող խախտումներ:

Էկոնոմիկայի նախկին նախարար **Ներսես Երիցյանն** էլ այսուհետեւ տնտեսական ոլորտի մասին խորհուրդներ կտա նախագահ Սարգսյանին: Մինչ այդ նախագահի տնտեսական հարցերով խորհրդականի պաշտոնը զբաղեցնում էր **Վահրամ Ներսիսյանցը**, որը նշանակվել է Համահայկական բանկի նախագահ:

«Հայռուսգազարդ» ընկերության գործադիր տնօրենի պաշտոնում Երեւանի քաղաքապետ **Կարեն Կարապետյանին** փոխարինել է նրա տեղակալ **Վարդան Հարությունյանը**, Արդարադատության նախարար **Գեւորգ Դանիելյանին**՝ սահմանադրագետ **Հրայր Թովմասյանը**:

Մյուս կողմից, նախագահ **Սերժ Սարգսյանի** հրամանագրով գնդապետ **Արամ Տեր-Սահակյանը** նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության պետ 5 տարով:

Հ. Հ.

Հերթում

Մեր թերթի երեկվա համարում «Պաշտոնանկությունների շարքը շարունակվում է...» վերտառությամբ լրատվության մեջ այլոց շարքին նշել էինք նաեւ ՀՀ առողջապահության նախարարի՝ առաջիկա հունվարին սպասվող պաշտոնանկության մասին: Մեր այդ տեղեկությունը, որը քաղել էինք ինտերնետային տարբեր կայքէջերից, վրդովմունք է առաջացրել նախարարության աշխատակիցների շրջանում: Նրանք մեր թերթին հայտնեցին, որ շրջանառվող տեղեկությունը առողջապահության նախարարի պաշտոնանկության մասին՝ անհիմն է:

Իսպանական Բալիարեսի կղզիները ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը

Պալմա դե Մայորկա վարչական կենտրոնով իսպանական՝ ինքնավար կարգավիճակ ունեցող Բալիարեսի կղզիների խորհրդարանը երեկ ճանաչել է «իրադարձությունները՝ 1915-21-ին Օսմանյան կայսրությունում»՝ որպես հայերի ցեղասպանություն: Հիշեցնենք, որ ավելի վաղ իսպանական ինքնավարություններից Բասկոնիայի եւ Կասալոնիայի խորհրդարանները նույնպես ճանաչել էին Հայոց ցեղասպանությունը: Ի դեպ այս օրերին Իսպանիայի արտգործնախարար Տրինիդադ Խիմենեսի հրավերով Մադրիդում է ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանը: Ինչպես տեղեկանում ենք Հայաստանի արտգործնախարարության մամուլի եւ տեղեկատվության վարչությունից՝ այցի հիմնական նպատակն է նոր լիցք հաղորդել երկկողմ հարաբերություններին, որոնք ունեն չօգտագործված ներուժ. «Այս տարի մենք Մադրիդում դեսպանատուն բացեցինք, ինչը Իսպանիայի հետ հարաբերությունների ամրապնդման ու խորացման Հայաստանի ցանկությունն է», ասել է Նալբանդյանը՝ Խիմենեսին հրավիրելով փոխադարձ այց կատարել Հայաստան: Տիկին նախարարը՝ 2011-ի առաջին կեսին կլինի մեր երկրում: Նախարարների հանդիպման ժամանակ անդրադարձ է կատարվել՝ ԵՄ-Հայաստան հարաբերություններին, իսկ երկկողմ հարաբերությունների խորացման առումով կարեւորվել է ուղիղ օդային հաղորդակցության ապահովումը:

Հ. Ա.

Տիգրան Սարգսյանը կհանդիպի Վլադիմիր Պուտինին

Երեկ տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ ՌԴ կառավարության ղեկավար Վլադիմիր Պուտինի հեռախոսազրույցը: Կառավարության տեղեկատվության ու հասարակայնության հետ կապերի վարչության հաղորդմամբ՝ հեռախոսազրույցի ընթացքում քննարկվել են երկկողմ առեւտրատնտեսական հարաբերություններին վերաբերող հարցեր:

Կողմերը պայմանավորվածություն են ձեռք բերել հանդիպելու դեկտեմբերի 22-ին՝ ՀՀ վարչապետի Սանկտ Պետերբուրգ կատարելիք աշխատանքային այցի ընթացքում:

Հ. Ա.

Եթե ԱՊՊԱ, ապա ԻՆԳՈ

ԱՊՊԱ պայմանագրեր ձեռք բերելու ժամկետի ավարտին մնացել է 13 օր:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»
ապահովագրական ընկերությունը կատարում է պայմանագրերի ձեւակերպում:

- ՀՀ, ք. Երեւան, Տպագրիչների 8
- ՀՀ, ք. Երեւան, Դեմիրճյան 38
- ՀՀ, ք. Երեւան, Վ. Սարգսյան 20 հասցեներով:
- www. ingoarmenia.am կայքում
- 010-59-21-21 թեժ գծով:
- Telcell տերմինալների միջոցով

Ինչպես նաեւ գործում է ԱՆՎՃԱՐ առաքում:

«ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ»
Մենք վճարում ենք: Մի՛ շտապ*

* համաձայն ապահովագրության պայմանագրի եւ պայմանների:

Ինչպես են փոփոխվում պետական միջոցները

Որոշ բացահայտումներ է կատարել ֆինանսների նախարարության ներքին աուդիտի եւ ֆինանսական վերահսկողության վարչությունը

Ռիսկերի վրա հիմնված վերահսկողության արդյունքները երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսում ներկայացրեց ֆինանսների նախարարության ներքին աուդիտի եւ ֆինանսական վերահսկողության վարչության պետ **Սոնա Ղարիբյանը**: Նա տեղեկացրեց, որ վարչությունը սուգումներ է իրականացնում պետական կամ պետական մասնակցություն ունեցող օբյեկտներում: Համաձայն այդ սուգումների, 2009-2010 թվականներին վերականգնվել կամ վերաձեւակերպվել է 12,6 մլրդ դրամ, (որից 8,4 մլրդ դրամը 2010-ին) 2007-2008 թվականներին վերականգնված մոտ 1,9 մլրդ դրամի դիմաց: Այսինքն, ըստ Սոնա Ղարիբյանի, վերջին երկու տարիներին վերականգնված գումարը գերազանցել է նախորդ երկու տարիներինը 7 անգամ: Միաժամանակ, վարչության պետը նշեց նաեւ, որ 2010-ին իրականացվել են 60 ծրագրային սուգումներ, որը 2007-ի համեմատ 5 անգամ ավելի փիչ է, բայց արձանագրված գումարները 2007-ի համեմատ ավելացել են 50 տոկոսով:

Ըստ ոլորտների, կրթության ոլորտում վերականգնվել է 160 մլն դրամ 10 բուհերում, որոնցում ներկայացվել էին ավելի շատ թվով ուսանողներ եւ ավելի մեծ ծախսեր, քան իրականում է:

Հաջորդ ոլորտը «Հազարամյակի մարտահրավերներ» ծրագրի շրջանակներում իրականացվող ճանապարհաշինությունն է, որտեղ 2009-ի վերջին ուսումնասիրվել է 26 ճանապարհների շինարարությունը: Անցկացված սուգումներից պարզվել է, որ կապալառու կազմակերպությունների կողմից պահանջվել է 6,8 մլրդ դրամ, այն դեպքում, երբ ներքին աուդիտի եւ ֆինանսական վերահսկողության վարչության ուսումնասիրություններով այդ գումարը պահանջվածից ավելի է 5 մլրդ դրամով: Միաժամանակ, ճանապարհների պահպանումն ու շահագործումն իրականացվել է առանց պահանջարկը հաշվի առնելու: Այսինքն, կապալառուները ձյան մաքրելու համար պահանջել եւ ստացել են գումարներ, չնայած ձյուն չի եկել:

Քաղաքաշինության ոլորտում եւս նմանատիպ խախտումներ են եղել, որոնք արձանագրել է ֆինախարարության վերոնշյալ վարչությունը: Արդյունքում, 1 մլրդ դրամով նվազեցվել է բյուջեից տրամադրվող գումարը:

Երեւանի ոսկեդեղական գործարանում, որի 80 տոկոսը պետական է, 2 մլրդ դրամի գումար է վերականգնվել, որը հաշվեկշռից պարտքը դուրս գալու հեռեւանքով էր: Սոցիալական ապահովության ոլորտում եւս նվազեցվել են այն գումարները, որոնք նախարարությունը պահանջել է, հաշվի չառնելով իրական պահանջարկը: Մասնավորապես 6 գիշերօթիկների համար ներկայացվել է ավելի գումար, քան այնտեղ սովորողների թվի համար է նախատեսված: Այստեղ վերականգնվել է 160 մլն դրամ: Նույն կերպ նվազեցվել են հաշմանդամների, մանկատան սաների անվան տակ պահանջվող գումարները, քանի որ իրական թվին ոչ համապատասխան գումարներ են պահանջվել:

«**Ազգի**» հարցին, թե ներքին աուդիտի եւ ֆինանսական վերահսկողության վարչությունը չե՞ն կրկնում միմյանց գործառույթները, Սոնա Ղարիբյանը պատասխանեց, որ իր ղեկավարած վարչությունը միայն բյուջեի ծախսերի ներքին հսկողությունը՝ ներքին աուդիտն է իրականացնում, իսկ Վերահսկիչ պալատը՝ արտաքին հսկողությունը: Մեր մյուս հարցին, թե ինչ մեխանիզմներ են առաջարկվել, որ նման կարգի խախտումներ հետագայում չլինեն, ֆինանսների նախարարության վարչության պետն անորոշ պատասխան տվեց, ասելով, որ յուրաքանչյուր կառույց պետք է ղեկավարվի իր նորմատիվային ակտերով:

«**Ազգի**» հաջորդ հարցն այն էր, թե ո՞րն է պատճառը, որ 2009-2010-ին ավելի շատ գումարներ են վերականգնվել, քան 2007-2008-ին, ֆինանսական վերահսկողության վարչությունն է այժմ ավելի լավ աշխատել, թե՞ այն ժամանակ խախտումներն են ավելի փիչ եղել: Սոնա Ղարիբյանն այս հարցին խուսափեց ըստ էության պատասխանելուց, ասելով, որ ինքը պետական համակարգում աշխատում է 2008-ի դեկտեմբերից:

Այնուամենայնիվ, հարկ է ընդգծել այն տխուր իրողությունը, որ, շատ հաճախ, դժվարությամբ հավաքված հարկերը նույն պետական կառույցները պարզապես մսխում ու փոշիացնում են:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

«Կադրային ջարդ չի լինի, բայց կլինեն խաղի կանոններ»

1-ին էջից

Նորընտիր խաղախաղեսը խոստովանում է, որ իր համար անսպասելի էր խաղախաղեսի պաշտոնում առաջադրելու ՀՀԿ-ի որոշումը:

«Համակրում եմ Հանրապետական կուսակցությանը, բայց որոշում, որ կհամալրեմ՝ չունեմ»: Խոսակցություններն էլ, թե ՀՀԿ որոշումը ուղղորդված էր Մոսկվայից, խաղախաղեսը հերքում է:

Անդրադառնալով նախկին խաղախաղես Գագիկ Բեգլարյանի աշխատանքին՝ Կարապետյանն այն դրական գնահատեց՝ հավելելով, որ հաջողված խայլեր է կատարել: «Երեւի յուրաքանչյուր խաղախաղես, որ գալիս է, նախկին խաղախաղեսի ծրագրերը, որ հաստատված են, շարունակելու է»:

Հարցին էլ, թե ինչու նախկին խաղախաղեսը չի մասնակցում ընտրություններին, Կարապետյանն ասաց. «Կարծում եմ՝ Գագիկ Բեգլարյանը սի՝ խաղախաղեսն իր լիազորությունները կստանձնի ընտրվելուց հետո, օրենքով սահմանված կարգով, երրորդ օրացուցային օր: Դեկտեմբերի 20-ին, ժամը 11-ին ավագանու նիստում տեղի կունենա նորընտիր խաղախաղեսի երդման արարողությունը:

Համաձայն «Երեւան խաղաքաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 47-րդ հոդվածի առաջին մասի՝ խաղախաղեսն իր լիազորությունները կստանձնի ընտրվելուց հետո, օրենքով սահմանված կարգով, երրորդ օրացուցային օր: Դեկտեմբերի 20-ին, ժամը 11-ին ավագանու նիստում տեղի կունենա նորընտիր խաղախաղեսի երդման արարողությունը:

Հաստատելով նախկին խաղախաղեսի ներկա չէ ընտրություններին հարգելի պատճառներով»:

Համաձայն «Երեւան խաղաքաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 47-րդ հոդվածի առաջին մասի՝ խաղախաղեսն իր լիազորությունները կստանձնի ընտրվելուց հետո, օրենքով սահմանված կարգով, երրորդ օրացուցային օր: Դեկտեմբերի 20-ին, ժամը 11-ին ավագանու նիստում տեղի կունենա նորընտիր խաղախաղեսի երդման արարողությունը:

«Էքսպերտիզա» ընկերության տնօրեն Գեորգի Նանյանը հա-

Ուղղակի եւ փոխաբերական իմաստով կուտակված աղբի մասին, որը պետք է մաքրել

1-ին էջից

Օրենքի ընդդիմախոս դաշնակցականներն ու ժառանգականները գտնում էին, որ երկրորդ ընթերցմամբ այս օրենքն այնքան է խեղաթյուրվել, որ դարձել է վճարի չափ սահմանելու գործիք, մինչդեռ ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենք պետք է լիներ: Օրենքում միասնական ռազմավարություն չկա, նախագիծն այս տեսքով ընդունել չի կարելի՝ ոլորտն ուսումնասիրության եւ հայեցակարգային մոտեցումների կարիք ունի, իսկ հաշտաղ քննարկումները թույլ չեն տալիս հասկանալ այս բոլորը. «Սա օրենք է կազմակերպված կողոպուտի մասին՝ Հայաստանի քաղաքացու գրպանից», այսպես գնահատեց փաթեթը **Սյոնթա Սաֆարյանը**: Պատգամավորները կասկածներ ունեին, որ աղբահանության վարձը ոչ թե 250 կամ 300 դրամ կսահմանվի տեղերում, այլ՝ հենց 500, որ լրացուցիչ բեռ դառնալով ընտանեկան բյուջեի համար, մանավանդ դա պարտադիր վճար է, իսկ բնակչի հետ պայմանագիր օրերաստորը չի կնքում. վճարում է բնակիչը, իսկ նրա վճարելու վերաբերյալ պայմանագիրը կնքում են տեղական ինքնակառավարման մարմիններն ու օրերաստորը:

Օրենքի քննարկումն այնքան շիկացավ, որ այս երեք օրվա ընթացքում ընդդիմադիր եւ կոալիցիոն լիցքերը հանգուցալուծվեցին Ստեփան Սաֆարյան-Գալուստ Սահակյան ակնարկափոխանակության մեջ: Բոլոր, եւ այս օրենքի եւս ակտիվ ընդդիմախոս «Ժառանգության» ելույթները նկատի առնելով՝ ամբիոն բարձրացավ ՀՀԿ խմբակցության ղեկավարը եւ բավական խիստ տոնով եւ նկատի ունենալով ընդդիմադիր պատգամավորների այն հայտարարությունները, որ 2-3 օր իրենք իրենց ելույթներում պայքարում են, արդյունքում կառավարությունը հետ է վերցնում օրենքների մի մասը, նկատեց. «Ես կարծում եմ, որ մարդիկ կարող են նաեւ հիվանդ լինել, բայց տա նաեւ Աստված, որ կատարյալ հիվանդ չլինեն...Երբ օրակարգը եկել է՝ նախքան գալը շատ բաներ հանվել են, գալուց հետո էլ՝ հանձին քաղաքական կոալիցիայի, մասնավորապես Աժ նախագահի հորդորներով, բավական բաներ հանվել են... Հիմա կտրիճ Դավոյի պես իջնում են լեռներից ներքեւ: Ժողովուրդը հետեւյալն է ասում՝ եթե թանի մեջ ճանճ է ընկնում, որեւէ մարդ այդ թանը չի խմում, բայց դա չի նշանակում, որ թան խմելու իրավունք չունի: Ստիպված, նախ ճանճի պրոբլեմներն են լուծում եւ նոր թանը խմում: Եթե դա էլ չի կարողանում, ստիպված ձմռանն է խմում, որովհետեւ ճանճեր չկան», այլաբանորեն վիճակը պատկերեց **Գալուստ Սահակյանը**՝ կոռեկտության կոչ անելով ընդդիմախոս պատգամավորներին: Իսկ **Աժ նախագահն** այլ դիտանկյունից նայեց խնդրին՝ նա մեկ անգամ եւս համոզվեց այս դեբատներով, որ Ազգային ժողովը որպես բազմակարծության ամբիոն կայացել է: Իսկ ճանճը խոսակցության գործող անձ դարձավ այն պահից, երբ «Ժառանգության» ղեկավար Ստեփան Սաֆարյանին ելույթի ժամանակ խանգարող ճանճը բավական զվարճացրեց հանրապետականներին:

Երեկ, ի դեպ, փաթեթի քվեարկությունը չկայացավ, քանի որ չնայած Աժ նախագահը երկու անգամ քվեարկության դրեց հարցը, երկու անգամ էլ ընդամենը 57 եւ 60 կողմ հավաքեց, իսկ «Ժառանգությունը» եւ ՀՅԴ-ն քվեարկությանը չմասնակցեցին:

ԵԹԵՐԱԶՐԿՄԱՆ ԴԵՄ

Կարապետիչը կպայքարի խաչերով եւ մոմավառությամբ

ՀՌԱՀ որոշումը՝ ԱԼՄ-ին զրկել եթերից, «ԱԼՄ» հոլդինգի նախագահ Տիգրան Կարապետյանը որակում է ակնհայտ կեղծիք: Կարապետիչը «Երեւան» հեռուստաընկերության դեմ ոչինչ չունի, սակայն իր հեռուստաընկերության առավելությունները չտեսնել չի կարող:

Հանձնաժողովի ներկայացրած փաթեթի 6 կետերն էլ «ԱԼՄ»-ն բավարարել է: «Մեր ֆինանսական ներդրումը կազմում է 600 մլն դրամ, «Երեւան TV»-ինը՝ 400: Նրանք ունեն 42 աշխատող, ես՝ 83: Նրանք շենք չունեն, մենք՝ ունենք», երեկ ասաց նա ՄԱԱ-ում:

Նրա գնահատմամբ՝ հաղորդումների առումով էլ «ԱԼՄ»-ն առավելություն ունի: Այս ամենը վերլուծելով՝ «ԱԼՄ» հոլդինգի նախագահը զարմացել է, որ ՀՌԱՀ-ը նախապատվությունը տվել է «Երեւանին»:

Կարապետյանը համոզված է՝ որոշումն ակնհայտորեն քաղաքական էր, վերջին պահին հանձնաժողովին վերեւից զանգել են ու հրամայել՝ «ԱԼՄ»-ին եթեր չտրամադրել: Կատարված անարդարության դեմ Կարապետիչն իր մեթոդներով կպայքարի: Եթեր վերադառնալու համար կդիմի բոլոր հավանական եւ անհավանական տարբերակներին՝ դատական ատյաններից մինչեւ եվրոդատարան: Նախընտրական շրջանում մարզերում կհանդիպի մարդկանց հետ, օրլայն հանդիպումներ կունենա, մարզային հեռուստաընկերություններից մեկում էլ նախապատրաստվում է բաժնեմաս ունենալ, որպեսզի «հաճույք չպատճառի իրեն եթերից զրկողներին»: Մարզային հեռուստաընկերությունում բաժնեմաս ունենալու համար նա արդեն դիմել է ռուսաստանաբնակ իր ընկերներին, ովքեր խոստացել են ֆինանսական աջակցություն ցուցաբերել:

Անարդարության դեմ Կարապետիչը որպես զենք կօգտագործի խաչը:

«Խաչն եմ առաջ բրդելու. որ տեսնում ես չարին, պետք է խաչը դեմ տաս: Ես խաչն եմ դեմ տալու: Մենք մոմավառություն ենք կազմակերպելու խաչերով: Ես բնիկ երեւանցի եմ, եւ այս օյինբազությունները, ամեն ինչ մեզանով անելը չեմ ընդունում»:

Հ. Հ.

Արտահանողները չե՞ն դժգոհում

Արտահանման խնդիրները քննարկելու նպատակով երեկ Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատում (ՀԱԱՊ) հրավիրվել էին արտահանող մի շարք ընկերությունների ներկայացուցիչներ: Երեւանի ԱԱՊ նախագահ Անդրանիկ Ալեքսանյանը ներկաներին առաջարկեց մասնացույց անել առկա խնդիրները, որոնք կարող են կապված լինել ինչպես առեւտրաարդյունաբերական պալատի գործունեությանը, նաեւ լինեն օրենսդրական, իրավական եւ այլ բնույթի, որպեսզի ներկայացվեն կառավարության ուշադրությանը: Սակայն, որքան էլ սարսափելի էր, սովորաբար տարաբնույթ խոչընդոտներից մշտապես բողոքող գործարարները գրեթե միաբերան փաստեցին, որ իրենք խնդիրներ չունեն:

Մասնավորապես, «Երեւանի գարեջուր», «Ջորագյուղ» ադամանդի մշակման եւ այլ ընկերությունների ներկայացուցիչները իրենց գոհունակությունը հայտնեցին ՀԱԱՊ կողմից տրամադրվող հավաստագրերի գներից եւ տրամադրման գործընթացներից: Ըստ նրանց, ապրանքի վաստիացրեց, որ իրենց տված սերտիֆիկատները, որոնք պարտադիր պահանջ են Հայաստանից ապրանք ներմուծող երկրներում, որեւէ խնդիր չեն առաջացրել: Իսկ եթե դրանք չտրամադրվեն, ապա արտահանող կազմակերպությունները խնդիրներ կունենան այդ երկրներում: Նա նաեւ տեղեկացրեց, որ իրենք կառավարությանը առաջարկ են ներկայացրել, ըստ որի՝ արտահանման համար պահանջվող հավաստագրի վճարը լինի սանդղակով՝ սկսած 5 հազար դրամից ավելի փոքր արտահանողների համար եւ ավելի մեծ գումարներ՝ ավելի մեծաքանակ ապրանքներ արտահանողների համար:

Մեկ խնդիր արտահանող գործարարներն այնուամենայնիվ նշեցին: Խոսքը արտահանման թույլտվության գրության մասին է, որ պետք է ստորագրի մաքսատան ղեկավարը: Մինչդեռ նա կարող է այդ պահին զբաղված լինել, եւ բեռների արտահանումը ուշանա 2-3 ժամով:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԺԹ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի: Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Հայրենիք

Համահայկական հիմնադրամի տարին

«Հայաստան» համահայկական հիմնադրամի այս տարվա հավաքագրած գումարը՝ 20 մլն 862 հազար 733 դոլար, ինչպես արդեն հայտարարված է, պետք է ուղղվի Արցախի ջրամատակարարմանն ու Հայաստանի գյուղերի բարելավմանը: Սակայն այդքանը, ինչպես երեկ ասուլիսում նկատեց հիմնադրամի գործադիր տնօրեն **Արա Վարդանյանը**, բավարար չէ, որ ջրամատակարարման խնդիրը լուծվի ամբողջությամբ: «Թերեւս հավաքագրված գումարներով մենք կկարողանանք լուծել Արցախի ջրամատակարարման խնդրի 30-40 տոկոսը: Հենց այս պատճառով էլ ես կարծում եմ, որ անհրաժեշտ կլինի եկող տարի եւս ֆինանսավորման հիմնական ուղղությունը վերցնել վերոհիշյալ խնդիրը», ասաց Վարդանյանը: Իսկ, ընդհանուր առմամբ, ամփոփելով տարին, հիմնադրամի գործադիր տնօրենը, հատուկ շեշտելով Ռուսաստանում ապրող մեր հայրենակիցների ակտիվությունը, որի արդյունքում հավաքագրվել է 10 մլն 600 հազար դոլար (նվիրատվություն կատարած ամենամեծ համայնքը-Հ. Ա.), ինչպես նաեւ Հայաստանից ու Արցախից ստացած նվիրատվությունների թվի աճը (1 մլն 965 հազար դոլար եւ 1 մլն դոլար՝ համապատասխանաբար), նշեց, որ գերազանցվել են անցյալ տարվա ցուցանիշները. «Այս տարի մեզ աջակցեցին նաեւ մեր դեսպանատները, հատկապես այն երկրներում, որտեղ հիմնադրամը չունի կառույցներ: Բացի այդ՝ այս տարի առաջին անգամ մենք իրականացրինք online նվիրատվություն, որի արդյունքում հավաքագրվեց 10-15 հազար դոլար: Ուզում եմ հատուկ ընդգծել Ռուսաստանի մեր հայրենակիցների ակտիվությունը. առաջիկայում ուսումնասիրություններ կանենք այդ երկրում՝ փորձելու իրականացնել sms դրամահավաքներ»: Բանախոսը ընդգծեց, որ այս տարվա արդյունքերով ԱՄՆ-ում նվիրատվությունների թիվն աճել է 15 տոկոսով (ԱՄՆ արեւելյան շրջանից այս տարի հավաքագրվել է 750 հազար դոլար, արեւմտյանից՝ 2 մլն 112 հազար 693 դոլար), իսկ Եվրոպայում՝ 13 տոկոսով: Ընդհանուր առմամբ եվրոպական երկրների հայկական համայնքը այս տարի նվիրաբերել է ավելի քան 2 մլն 908 հազար դոլար, որից՝ 2 մլն 225 հազար 600-ը՝ միայն ֆրանսահայ համայնքը: Անդրադառնալով անհատ նվիրատուներին՝ Վարդանյանը ընդգծեց, որ նրանց թվում զգալի մաս են կազմում հայաստանցիները. 100 հազար դոլար եւ ավելի նվիրատուների ցուցակում են Միխայել Բաղդասարովը (100 հազար դոլար), Բարսեղ Բեգլարյանը (100 հազար դոլար), Վալերի Մեջլումյանը (200 հազար դոլար), «Վիվասել-ՄՏՍ»-ն (470 հազար դոլար) եւ այլք: Անհատ նվիրատուներից ամենամեծ աջակցությունը ցուցաբերել է ռուսաստանաբնակ Սամվել Կարապետյանը՝ 2 մլն դոլար, եւս 2 մլն դոլար հիմնադրամը կստանա Լեւոն Հայրապետյանից, իսկ Համաշխարհային հայկական կոնգրեսի ու Ռուսաստանի հայերի միության նախագահ Արա Աբրահամյանի նվիրաբերած 1 մլն 600 հազար դոլարը, հիմնադրամի գործադիր տնօրեն Վարդանյանի խոսքերով, կուղղվի Ստեփանակերտի 2-րդ դպրոցի կառուցմանը, ինչի ֆինանսավորումը ամբողջությամբ կատարում է Ռուսաստանի հայերի միությունը:

Փոստային, sms դրամահավաքների, բանկային փոխանցումների ու կանխիկ նվիրատվությունների միջոցով՝ այս տարի գումար են փոխանցել 42 հազար 623 նվիրատու, անցյալ տարվա 30 հազարի փոխարեն: Հեռուստափառատոնը հեռարձակվեց մի քանի հայկական հեռուստաալիքներով, Վարդանյանի տվյալներով, Հայաստանի 17 քաղաքների շուրջ 1 մլն 600 հազար հեռուստադիտողներ առնվազն 30 րոպե դիտել են միջոցառումը: «**Ազգ**»-ի հարցին, թե որքա՞ն գումար է ծախսվել հեռուստափառատոնի «այս տարվա տարբերակի վրա», Վարդանյանը պատասխանեց՝ շուրջ 1 մլն դոլար:

Հատկանշական է, որ այս տարի, փաստորեն, եվրոպական համայնքների ընդհանուր նվիրատվությունը ավելի մեծ է, քան ԱՄՆ-ի արեւմտյան ու արեւելյան թեւերի, այդ թվում՝ արեւմտյան շրջաններից «անանուն նվիրատուների» օժանդակությունները: Ի դեպ, ԱՄՆ-ի արեւմտյան շրջանների «անանուն նվիրատուներին» ցուցաբերած նվիրատվության ընդհանուր գումարը 600 հազար դոլար է: Իսկ թե ինչո՞ւ նրանք, խոշոր նվիրատվություններ կատարելով, չեն նշում իրենց անունները, Վարդանյանը մեկնաբանեց հետեւյալ կերպ. «ԱՄՆ-ի՝ հատկապես արեւմտյան շրջաններում գործում են բազմաթիվ բարեգործական կազմակերպություններ, որոնք ուշիուշով հետեւում են մեր հեռուստափառատոներին: Իսկ այնտեղ նվիրատվություններ արած իրենց շրջանների քաղաքացիներին, հետագայում «հանգիստ չեն տալիս»՝ խնդրելով օժանդակել նաեւ իրենց կազմակերպություններին ու նախաձեռնություններին»: Այնուամենայնիվ, Վարդանյանի խոսքերով, հեռուստափառատոնը ԱՄՆ-ի հատկապես այդ շրջաններին պետք է: «**Ազգի**»-ի դիտարկմանը, թե ինչո՞ւ է հեռուստափառատոնը կազմակերպվում բացառապես Լոս Անջելեսում, Վարդանյանը պատասխանեց. «Դա արդեն ավանդույթ է դարձել. ամերիկացի մեր հայրենակիցները սովորել են ամեն տարի նոյեմբերին ԱՄՆ-ում նշվող տոների «շրջանակներում» նաեւ հեռեւել փառատոնի ընթացքին, մենք չենք կարող փառատոնը «խլել» նրանցից: Բացի այդ՝ մեր հեռուստափառատոնը նաեւ ԼՂՀ նախագահի համար կարեւոր ամբիոն է: Կարծում եմ, երբ կլուծվի ղարաբաղյան հիմնահարցը, մենք էլ կարող ենք հեռուստափառատոնի հասցեն դարձնել, ասենք, Ռուսաստանը եւ այլն»:

Վերջում բանախոսը, ընդգծելով, որ «սովորաբար հեռուստափառատոնի ընթացքում արված ֆինանսավորման խոստումների միայն 2-3 տոկոսը չի իրականացվում», ասաց. «Այս պահի դրությամբ մենք ստացել ենք նվիրատուներից արդեն ավելի քան 6 մլն դոլար», հիշեցնենք՝ 20 մլն 862 հազար 733 դոլարից:

Հավելենք նաեւ, որ այս տարի հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ Հայաստանում ավարտված են մի շարք հիվանդանոցների, դրանց առանձին բաժանմունքների, ջրամատակարարման համակարգերի, տարբեր համայնքային կենտրոնների շինություններ, ճանապարհային վերգետնյա անցումների, մշակութային տների շինարարությունները: Ընթացքում են մի շարք ծրագրեր եւս: Արցախում նույնպես հիմնադրամի օժանդակությամբ կառուցվել ու կառուցվում են հատկապես ջրամատակարարման համակարգեր, դպրոցներ (հիմնականում գյուղական համայնքներում) եւ այլն:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

«Վիվասել-ՄՏՍ»-ն վճարում է 150 ուսանողի ուսման վարձը

«Վիվասել-ՄՏՍ» ընկերությունը վճարում է հայաստանյան տարբեր բուհերում սովորող 150 ուսանողի ուսման վարձը: Երեկ այս մասին «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխամասային գրասենյակում հայտարարեց ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը: Երեւանից ու տարբեր մարզերից ընտրվել են 150 ուսանողներ, որոնք օգտվելու են «Վիվասել-ՄՏՍ»-ի կրթաթոշակային երկարաժամկետ ծրագրից: Կրթաթոշակային այս ծրագիրն աջակցում է հատուկ կարիքներ ունեցող ծնողազուրկ եւ սոցիալապես անապահով ընտանիքներում ապրող առաջին ու երկրորդ կուրսի ուսանողներին: Մինչեւ ուսման ավարտն ընկերությունը պատրաստ է օժանդակելու այդ ուսանողներին, բայց պայմանով, որ նրանք հաջողությամբ ավարտեն ակադեմիական տարին եւ փոխադրվեն հաջորդ կուրս:

«Վիվասել-ՄՏՍ»-ի գլխամասային գրասենյակում երեկ հավաքվել էին այն ուսանողները, որոնք օգտվելու են կրթաթոշակային ծրագրից, բայց մինչեւ գրասենյակ գալը ուսանողները չգիտեին, թե ինչո՞ւ էին կանչել իրենց: Տնօրենի հայտարարությունն անակնկալ էր նրանց համար: Ուսանողներից բացի ներկա էին նաեւ տարբեր բուհերի ղեկավարներ:

«Մենք պատասխանատու ընկերություն ենք ու միշտ պետք է կանգնած լինենք մեր հասարակության ու ժողովրդի կողքին, եւ ուսանողներն էլ մի մասն են մեր հասարակության: Հետեւաբար ցանկացանք մեր «Կարիերայի զարգացման ծրագրի» շրջանակներում եւս մի ուղղություն ավելացնել ու մեր հովանավորության տակ ընդգրկել 150 ուսանողների», ասաց Ռալֆ Յիրիկյանը: Ծրագիրը նպատակ ունի ուսման ողջ ընթացքում հատուցելով ուսման վարձը՝ խոցելի խմբերի ուսանողության համար հասանելի դարձնել կրթությունը: Ռալֆ Յիրիկյանը նշեց, որ ընկերությունը ուսանողների մասին տվյալներ է հավաքել, վերստուգել դրանք համոզվելու համար, որ տվյալ ուսանողներն իսկապես սոցիալապես անապահով ընտանիքներից են. «Նաեւ գրավոր դիմումներ էինք ստանում: Կցանկանայինք ընտրել ավելի շատ ուսանողների, սակայն մեր երկրում միայն «Վիվասել-ՄՏՍ»-ն չէ... Միեւնույն ժամանակ ուզում էինք սա իբրեւ պատգամ հղել ափսառող այլ ընկերություններին, որպեսզի իրենք էլ ձեռք մեկնեն ուսանողներին»:

Ամանորի նախաշեմին ընկերությունն իսկապես անակնկալ մատուցեց ուսանողությանը, ինչը չէր սահմանափակվում միայն կրթաթոշակային աջակցության ծրագրով: Վիճակահանության միջոցով ներկա ուսանողներին ընկերությունը տվեց 9 հեռախոս, 7 շարժական համակարգիչ եւ 2 հեռուստացույց: Ուսանողների անուններն ընտրվեցին վիճակահանությամբ՝ պատահականության սկզբունքով:

ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

Հայաստանը 109-րդ տեղում է

Ըստ «Էկոնոմիստ» «2010 թ. Ժողովրդավարության ցուցիչ»-ի

Հեղինակավոր «Էկոնոմիստ» բրիտանական պարբերականի գիտավերլուծական կենտրոնի «Ժողովրդավարությունը նահանջում է» վերնագրով երրորդ զեկույցը ներկայացնում է իրադրությունը աշխարհով մեկ՝ 165 անկախ երկրներում եւ երկու այլ տարածքներում 2010 թ. նոյեմբերի դրությամբ:

«Ժողովրդավարության ցուցիչ»-ը հիմնված է հինգ առանցքային կատեգորիաների գնահատման վրա, որոնք էին ընտրական գործընթացը եւ բազմակարծությունը, քաղաքացիական ազատությունները, իշխանությունների գործառնությունը (ֆունկցիոնալությունը), քաղաքական մասնակցությունը եւ քաղաքական մշակույթը:

Ըստ այդմ երկրները դասակարգված են ըստ հետեւյալ տեսակների՝

	Երկրների քանակը	Երկրների տոկոսը	Աշխարհի բնակչության տոկոսը
Ամբողջական ժողովրդավարություններ	26	15.6	12.3
Թերի ժողովրդավարություններ	53	31.7	37.2
Խառը (հիբրիդ) ռեժիմներ	33	19.8	14.0
Ավտորիտար ռեժիմներ	55	32.9	36.5

Զեկույցի հեղինակները նշում են, որ 2008թ-ից ի վեր աշխարհում ժողովրդավարությունը հետընթաց է ապրում: Նրանք այդ նահանջի պատճառների շարքում շեշտում են ֆինանսատնտեսական ճգնաժամը:

Աշխարհի երկրները գնահատվել են 10-բալանոց նվազող սանդղակով: Առաջին հորիզոնականն է զբաղեցրել Նորվեգիան՝ ընդհանուր 9.80 գնահատականով: Վերջին՝ 167-րդ հորիզոնականում է Հյուսիսային Կորեան՝ ընդհանուր 0 գնահատականով:

Հայաստանը ցուցիչում զբաղեցնում է 109-րդ տեղը՝ խառը (հիբրիդ) ռեժիմների ցանկում, ընդհանուր 4.09 գնահատականով: 2008 թ. նույն ցանկում Հայաստանը զբաղեցրել էր 113-րդ տեղը, սակայն այդ տարում էլ Հայաստանը ստացել էր ընդհանուր նույն՝ 4.09 գնահատականը, ուստի եւ Հայաստանի առաջընթացը 2008 թ. համեմատությամբ գնահատված է 0: Հայաստանի 113-ից 109-րդ հորիզոնական բարձրանալը պայմանավորված է այլ երկրների հետընթացով:

Վրաստանը ցուցիչում զբաղեցնում է 103-րդ տեղը՝խառը (հիբրիդ) ռեժիմների ցանկում, ընդհանուր 4.59 գնահատականով: 2008 թ. նույն ցանկում Վրաստանը զբաղեցրել էր 104-րդ տեղը, սակայն այդ տարում Վրաստանը ստացել էր ընդհանուր 4.62 գնահատականը, ուստի եւ Վրաստանը առաջընթացը 2008թ. համեմատությամբ գնահատված է -0.02: Այսինքն Վրաստանը, բարձրանալով 104-ից 103-րդ հորիզոնականը, այնուամենայնիվ հետընթաց է ապրել:

Ադրբեջանը ցուցիչում զբաղեցնում է 135-րդ տեղը՝ ավտորիտար ռեժիմների ցանկում, ընդհանուր 3.15 գնահատականով: 2008 թ. նույն ցանկում Ադրբեջանը կրկին զբաղեցրել էր 135-րդ տեղը, սակայն այդ տարում Ադրբեջանը ստացել էր ընդհանուր 3.19 գնահատականը, ուստի եւ Ադրբեջանի առաջընթացը 2008թ. համեմատությամբ գնահատված է -0.04: Այսինքն Ադրբեջանը, մնալով նույն 135-րդ հորիզոնականում, հետընթաց է ապրել:

Թուրքիան ցուցիչում զբաղեցնում է 89-րդ տեղը՝ խառը (հիբրիդ) ռեժիմների ցանկում, ընդհանուր 5.73 գնահատականով: 2008 թ. նույն ցանկում Թուրքիան զբաղեցրել էր 87-րդ տեղը, սակայն այդ տարում Թուրքիան ստացել էր ընդհանուր 5.69 գնահատականը, ուստի եւ Թուրքիայի առաջընթացը 2008թ. համեմատությամբ գնահատված է 0.04: Այսինքն Թուրքիան, իջնելով 87-րդ հորիզոնականից 89-րդ, իրականում առաջընթաց է ապրել:

Իրանը ցուցիչում զբաղեցնում է 158-րդ տեղը՝ ավտորիտար ռեժիմների ցանկում, ընդհանուր 1.94 գնահատականով: 2008 թ. նույն ցանկում Իրանը զբաղեցրել էր 145-րդ տեղը, սակայն այդ տարում Իրանը ստացել էր ընդհանուր 2.83 գնահատականը, ուստի եւ Իրանի առաջընթացը 2008թ. համեմատությամբ գնահատված է -0.89: Այսինքն Իրանը, իջնելով 145-րդ հորիզոնականից 158-րդ, ամենալուրջ հետընթացն է ապրել տարածաշրջանում:

Երկիրը	2010թ. ցուցիչը	2010թ. տեղը	2008թ. ցուցիչը	2008թ. տեղը	Ցուցիչների տարբերությունը
Հայաստան	4.09	109	4.09	113	0.00
Վրաստան	4.59	103	4.62	104	-0.02
Ադրբեջան	3.15	135	3.19	135	-0.04
Թուրքիա	5.73	89	5.69	87	0.04

Յունիսրիմ համակարգի 9-ամյա տարեդարձը նշանավորվեց միջազգային մրցանակներով

Ինը տարի առաջ՝ 2001թ.-ի դեկտեմբերին, առաջին անգամ Յունիսրիմ համակարգով իրականացվեց դրամական փոխանցում: Մատչելիությունը եւ սպասարկման բարձր որակը դարձան Յունիսրիմ համակարգի առաջխաղացման հիմնական ազդակները: Արդյունքներն իրենց երկար սպասել չտվեցին՝ տարեկան 6 մլն փոխանցում, 200 000 սպասարկման կետ աշխարհի 95 երկրներում: Հայաստանում Յունիսրիմը դարձավ դրամական փոխանցումների ամենապահանջված համակարգը՝ առաջատար դիրք զբաղեցնելով ինչպես ծավալային, այնպես էլ քանակային առումով:

Ինչպես նախաշեմին՝ նոյեմբերին, դրամական փոխանցումների համակարգերի միջազգային միությունը (IAMTN) Յունիսրիմ համակարգին պարգեւատրեց SPECIAL AWARD 2010 հատուկ մրցանակով: Յունիսրիմի ձեռքբերումները գնահատվեցին նաեւ Ernst and Young հեղինակավոր կազմակերպության կողմից: Համակարգի նախագահ **Սուրեն Հայրիյանը** ճանաչվել է «Տարվա ձեռնարկատեր» միջազգային մրցույթի հաղթողը «Ֆինանսներ» անվանակարգում: Հիշեցնենք, որ սեպտեմբերին 4-րդ ռուսաստանյան բանկային համաժողովում Յունիսրիմին հանձնվեց «Դրամական փոխանցումների ոլորտի առաջատար» դիպլոմը:

Յունիսրիմ դրամական փոխանցումներ իրականացվում են Յունիբանկի բոլոր 34 մասնաճյուղերում: Մինչեւ 3 000 USD, EUR կամ 100 000 RUB գումարով դրամական փոխանցում կատարելու դեպքում փոխանցման սակագինը կազմում է 1%, իսկ նշված գումարը գերազանցելու դեպքում՝ ընդամենը 0,45%: Եթե դրամական փոխանցումն իրականացվում է ՀՀ դրամով, ապա փոխանցման սակագինը կազմում է 0.35%: Յունիսրիմ համակարգի մասին առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք այցելել Յունիբանկի կայքէջը /www.unibank.am/ կամ զանգահարել հեռախոսակապի կենտրոն՝ 59 55 55 հեռախոսահամարով:

...Ինքն իրեն հավատարիմ մնալու գերագույն բարոյականությունը

Ինչքան էլ զերծ լինենք, վեր լինենք նախապաշարումներից, չենք կարող չընդունել, որ Սուսաննա Բաբայանին՝ մեր անմոռաց, անփոխարինելի ընկեր Սուսաննային, նախախնամությունն էր ուղարկել մեզ՝ Երեւանի պիոներների պալատի գրական խմբակի սաներիս: Ինչո՞ւ միայն մեզ: Այդ հմայիչ, առինքնող կինը, ով գրականության բացառիկ զգացողություն ու ճաշակ ուներ, ում անհույս սիրահարված էին ժամանակի նշանավոր ու դեռեւս անհայտ բանաստեղծները՝ հատկապես Պարույր Սեւակը, հրաժարվեց հրապուրիչ հեռանկարներից, նույնիսկ նյութական բարեկեցությունից, շուրջը համախմբեց մի խումբ դպրոցական պատանիների ու աղջիկների, որպեսզի համազգային անժամկետանց նպատակներին նվիրված սերունդ դաստիարակի: Միայն կողմնակի, պատահական անձանց կարող էր թվալ, որ գրական խմբակը գրողներ՝ բանաստեղծներ ու արձակագիրներ է պատրաստում: Հիմա արդեն կարելի է խոստովանել՝ այն տարիներին, երբ այսպես կոչված խորհրդային ձնհալը նոր-նոր էր իրեն զգացնել տալիս, որին շատերը հավատում, իսկ շատ շատերը վերապահությամբ էին վերաբերվում, մենք, մեր պատանեկան հախուռնությամբ, ձերբազատվում էինք համայնավարական կայսերատիրությունից, Հայաստանն անկախ հռչակում, ազատագրում էինք Արցախն ու մինչեւ անգամ Արեւմտահայաստանը: Նման միջավայրում ինչպե՞ս կինչեր այն լուրը, որ մեր խմբակի սանը, ամենասիրելի ամենաշնորհալի, լրջախոհ ընկերներից մեկը կոմերիտական աշխատանքի է անցել:

Նրան՝ խմբակ հաճախելու տարիներին, հատկապես պարկեշտության, բարեկրթության համար, շատ էի հավանում: Մանավանդ որ, ինչպես ինձ էր թվում, համակրանքը երկկողմանի էր: Պատկերացրեք հոգեվիճակս, երբ նա գրական իր չգիտեմ որ ծրագիրն իրագործելու համար ինձ Կենտկոմ հրավիրեց:

- Ինչպե՞ս ես, - երբ չափազանց երկար ու ընդարձակ առանձնասենյակը մտա, գրական խմբակի տարիների ջերմությամբ հարցրեց նա:

- Շնորհակալություն, Դո՞ւք ինչպես եք, - պաշտոնական դիմադարձեցի ես:

Ռոբերտը զարմացավ:

- Ինձ հետ «դուք»-ո՞վ ես խոսում:

- Տվյալ պահին ես Կենտկոմի քարտուղարի հետ եմ խոսում...

Իմ ձայնի մեջ երեւի անհաշտվողականություն, ընդվզում կար, նա դա զգաց, ու, զուսպ, ներքին թախիծով համակվեց: Բացատրություններ չեղան: Քիչ, շատ քիչ ժամանակ պիտի անցներ, որպեսզի համոզվեի, որ անիրավացի, անարդարացի եմ, որ Ռոբերտ Անդրանիկովիչը նախկին Ռոբերտն է՝ ընկեր Սուսաննայի սանն ու մեր գրական խմբակի ընկերը: Ես հիշում էի նրա բակունցյան ոճով գրված անպաճույճ, անմիջական պատմվածքները, նույնիսկ համոզված էի, որ թաքուն շարունակում է գրել, բայց իմ ուղղակի ու անուղղակի խնդրանքները, հորդորները, նույնիսկ հեղինակավոր գրողների ստիպումները ոչ մի արդյունքի չհանգեցրին: Ռոբերտն անդրդվելի մնաց: Նա, որ իրենից անհամեմատ թույլ գրողների տարբեր մրցանակների վկայագրերն էր վավերացնում, իր ոչ մի ստեղծագործությունը չցանկացավ ասպարեզ հանել, տպագրված տեսնել: Երեւի չէր ուզում մտածեին, որ դիրքն է չարաշահում:

Զարմանալի էր, մենք՝ գրական խմբակի սաներս, որքան տարիներն անցնում էին, այնքան ավելի խորն էինք գիտակցում այն անփոխարինելի դերը, որ մեզնից յուրաքանչյուրիս կյանքում խաղացել էր ընկեր Սուսաննան: Ու ամեն տարի, միշտ նույն օրը, երախտագիտությամբ, խոնարհումով, շիրմին այցելության էինք գնում: Այո, հանգստարանում, հարազատ ուսուցչուհու տաղանդաշատ շուրջը խմբված՝ մենք մեզ լավ էինք զգում, որովհետեւ համոզվում էինք, որ չնայած ընտրած մասնագիտությունների, զբաղեցրած պաշտոնների բազմազանությանը՝ հավատարիմ ենք մնացել նրա պատվիրաններին, ինքներս մեզ: Նույնը վերաբերում էր Ռոբերտին, որն անկախ այն բանից՝ կոմերիտմիության, թե Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար էր աշխատում, ձգտում էր մեզնից չտարբերվել, առնվազն այնպես անել, որ որեւէ կաշկանդում նախկին անմիջականությունը չաղճատի: Տարիների անմիջականություն, անկեղծություն, որ թանկ, ուրախություն էր յուրաքանչյուրիս:

Նման այցելություններից մեկի ժամանակ էր. մեզ՝ մեր ուսուցչուհու գերեզմանն անխնամ թվաց (մահվանից քառորդ դար էր անցել), ու տղաներով տեղնուտեղը որոշեցինք հաջորդ օրը հավաքվել, միացյալ ուժերով կարգի բերել: Հասկանալի է, այդ պայմանավորվածությունն ում ասես վերաբերում էր, բացի այնպիսի գերծանրաբեռնված անձնավորությունից, ինչպիսին այդ տարիների Կենտրոնական կոմիտեի քարտուղարը կարող էր լինել:

Հաջորդ օրն անբարենպաստ եղանակ էր, բայց ես, այնուամենայնիվ, Զեյթունի գերեզմանատուն գնացի: Որքան մեծ եղավ իմ զարմանքը, երբ, շիրմաթմբին չհասած, բահի, քլունգի ձայն լսեցի: Քիչ էլ մոտեցա, այլայլված մնացի: Ռոբերտը մեն-մենակ փխրեցնում էր ծաղկաթմբերը, արմատախիլ անում մոլախոտերը: Վարորդը, որ կանգնած էր կողքին, ուզում էր օգնել, նա թույլ չէր տալիս: Սիրելի ուսուցչուհու շիրիմը կարգի բերելն իր պարտքը, պարտականությունն էր համարում: Դա ոչ կեցվածք էր, ոչ էլ պահվածք, ինքը չէր էլ ենթադրում, որ խմբակից որեւէ մեկը մոտերքում է, իրեն տեսնում է...

Այդ պահին վերջնականապես համոզվեցի. Ռոբերտը՝ մեր Ռոբերտը, ճիշտ է, թե՛ Լենինականի քաղկոմի եւ թե՛ Կենտկոմի քարտուղար է աշխատել, բայց իր նկարագրին՝ առաքինությանը, հայրենասիրությանն ու անանձնականությանը հավատարիմ է մնացել: Ավելին, նրա հուղարկավորության ժամանակ (ինչ դժվար է գրվում այդ բառը), տարբեր ազգության դամբանախոսները, որոնք նրա հետ աշխատել էին Մոսկվայում, հեռավոր Եգիպտոսում, Ռոբերտին ներկայացնում էին ճիշտ այնպիսին, ինչպիսին մենք նրան ճանաչել, սիրել էինք գրական խմբակում:

Ինչպիսին հիշելու ենք այնքան, որքան մեր սիրտը կդիմանա ինքն իրեն հավատարիմ մնալու գերագույն բարոյականությանը:

ԳՐԻԳՈՐ ՁԱՆԻԿՅԱՆ
Գրող-հրապարակախոս





... Մարդը, ում ճակատագիրը մեզ տվեց պարգեւի պես

Այսօր հեռու՝ անցյալ դարում եւ նույնիսկ անցյալ հազարամյակում գտնվող 1960-ին, մենք երիտասարդ էինք, համալսարանի բանասիրական ֆակուլտետի առաջին կուրսի ուսանողներ, եւ, ընդհակառակը, հեռուներում էր այն ժամանակ անհասանելի թվացող 2000 թվականը: Տարին, օրն ու ժամը ուրիշ ընթացք ու բովանդակություն ունեին, հագեցած էին ինչքան ներկայով, այնքան էլ ապագայով, եւ երբեմն՝ երբ մեր երեւակայության թռիչքները մեզ շատ հեռու էին տանում, երբ կորցնում էինք չափի զգացումը, վերջին սահման, այնուամենայնիվ, կար մինչեւ խորհրդավոր 2000-ը: Այստեղ մեր երեւակայությունը եւ, ինչու չէ, նաեւ անհամեստությունը (չէ որ մեզ թվում էր սարեր ենք շուռ տալու), չափավորվում էր, եւ մենք ընդամենը հաշվում էինք, թե քանի տարեկան կլինենք այդ ժամանակ՝ 57, 58, 59... Եվ 2000-ը ավելի էր հեռանում, թվում էր չի գալու, որովհետեւ մեր երեւակայությունը, ինչքան էլ թեւավոր, թեւածում էր հնարավորի սահմաններում, որտեղ մեզ համար հաց ու ջուր, հաղթանակ ու պարտություն, կյանք ու կյանքի իմաստ էին գրականությունը, արվեստը, այն, ինչ պիտի անեինք, ինչով պիտի լցնեինք մեզ սպասող անվերջանալի տարիները:

Ես հասկանում եմ՝ գրում եմ մի մարդու մասին, որը խորը հետք է թողել մեր իրականության մեջ նախ եւ առաջ հաստատ տարիների իր գործունեությամբ, բայց գիտեմ եւ այն, որ Ռոբերտի բացառիկությունը, ինչպես եւ ամեն մարդու, գալիս էր իր էությունից, որը, համոզված եմ, երբեք այնքան թափանցիկ չէ, որքան երիտասարդության օրերին, երբ կաշկանդված չես պարտք ու պատասխանատվությամբ, երբ զբաղեցրածդ պաշտոնն ու դիրքը դիմացինին չեն խանգարում քո մեջ նախ մարդուն տեսնել, եթե նույնիսկ էությունդ այնքան ամբողջական է, որ այն չեն կարողացել փոխել ժամանակի քամիները, ոչ էլ հանգամանքների հարկադրանքը:

Ռոբերտին չփոխեցին: Նրա գործունեության ոլորտները մի քիչ ուրիշ եղան, քան ուսանող ժամանակ կարծում էինք մենք՝ նրա ընկերները, եւ, վստահ եմ, նախ եւ առաջ՝ ինքը: Բանասիրական ֆակուլտետի ուսանողի համար, որը զուրկ չէ գրական շնորհից, ապագան, գոնե անուրջներում, ամենագայթակղիչ կերպարով է ներկայանում՝ գրականության հանդերձներով: Ռոբերտի գրական ձիրքն անուրանալի էր: Ընդունելության քննությունների ժամանակ, ինչքան գիտեմ, ինչ-որ գնահատականի կապակցությամբ տարաձայնություններ էին առաջացել եւ ի վերջո լուծվել հօգուտ Ռոբերտի՝ որպես խոստումնալից, ապագա ունեցող արձակագրի: Ռոբերտը գրում էր, նաեւ նկարում: Սիրում էր երգել: Ոտքով-գլխով արվեստի մեջ էր: Եվ բնության: Քիչ եմ բնությունն այդքան սիրող եւ խորապես զգացող մարդու հանդիպել: Բնությունն ու մարդուն:

Վերջերս, համարյա քառասուն տարի անց, ինձ վիճակվեց նորից ձեռքս առնել Ռոբերտի՝ վաղ երիտասարդության տարիներին գրված պատմվածքները՝ մեքենագիր եւ նույնիսկ ձեռագիր: Տարիների վաղեմությունից դեղնած էջերն ինձ կրկին հիշեցրին, թե ո՞վ էր, որտեղի՞ց եւ ինչպիսի՞ն եկավ Ռոբերտ Արզումանյանը պեսական-հասարակական գործունեության մեծ ասպարեզ: Եկավ որպես փնտրված մարդ: Սա միանշանակ է: Իմ խորին համոզմամբ ոչ թե Ռոբերտն ընտրեց գործունեության ասպարեզ, այլ ասպարեզը, մի անգամ գտնելով նրան, այլեւս բաց չթողեց: Նրա սկզբունքայնությունը, ազնվությունը, լայնախոհությունը, շաբլոնից դուրս մտածելու եւ գործելու ունակությունը այնքան անհրաժեշտ էին մեր հանրապետությանը: Անպայման մեծ դեր էր խաղում նաեւ Ռոբերտի անձնական հմայքը, նրանից ճառագող մարդկային ջերմությունը: Գալիս էին դեպի նա, նրա շուրջը համախմբվում: Հոգեկան բնատուր շռայլությունը Ռոբերտի շուրջը ստեղծում էր մարդկային հարաբերությունների մի այնպիսի դաշտ, որի մեջ մտնելով դու նույնպես մաքրվում էիր: Պատահական չէր, որ որտեղ էլ նա աշխատեց, ինչ պաշտոն էլ զբաղեցրեց, իր հետեւից թողեց բարի համբավ: Համբավ՝ հաստատագրված նաեւ գործով: Երկար թվարկել երեւի պետք չէ, բավարարվեմ միայն հիշատակելով, որ նրա ղեկավարության ժամանակ Հայաստանի երկրորդ քաղաքը՝ Գյումրին (այն ժամանակ՝ Լենինականը), իսկական մշակութային վերածնունդ ապրեց:

Ռոբերտը երբեք չձգտեց իր անվան շուրջն արհեստական աղմուկ ստեղծել՝ բոլոր այն իսկական ստեղծագործողների նման, որոնք ոչ թե գործն են քաշ տալիս իրենց անվան սայլին կապած, այլ իրենք են գործի ետեւից գնում: Ճակատագրի կամքով կամ դիպվածով մեր պեսական-հասարակական կյանքը հանձին Ռոբերտ Արզումանյանի ստացավ մի մարդու, որը կարողացավ ստեղծագործաբար նայել մեր իրականությանը: Եվ եթե նրա ոչ բոլոր մտահղացումներն ու ցանկություններն ի կատար ածվեցին, ապա դա արդեն ոչ թե նրա մեղքն էր, այլ ժամանակի:

Ռոբերտ Արզումանյանը գործեց (թեեւ շարունակ ուզում եմ օգտագործել ստեղծագործեց բառը) երկու ժամանակների սահմանագլխին: Ավարտվում էր մեկը, սկսվում մյուսը: Կյանքի այս վայրիվերումների միջով նա անցավ արժանապատվորեն, բոլոր պարագաներում անդավաճան իր էությանը, որը թերեւս, եթե փորձենք մի բառով ասել՝ Սերն էր: Ներշնչված անպայման ի վերուստ, անաղարտ տարված ոչ միշտ հեշտ եւ բարեհաճ կյանքի միջով: Բացառիկ էր Ռոբերտ Արզումանյանն ամեն ինչով, իսկ նախ եւ առաջ՝ իր հոգեկան կերտվածքով: Տաղանդավոր ու շռայլ, ուժեղ ու զգայուն, ամուր ու փխրուն, արտաքուստ հաճախ խիստ, իսկ ներսից՝ միշտ տաք, ցավն իր մեջ պահող, մեզ՝ ինքնայրումի կրակը բաշխող, նա շռայլորեն սերը բաժանում էր, իսկ ցավը պահում իր մեջ:

Մեր հարազատը, մեր ընկերը, մեր գործընկերը՝ բառիս ամենախորը իմաստով գեղեցիկ, փնտրված մարդը, որին ճակատագիրը մեզ տվեց պարգեւի պես, տարավ անարդարացիորեն անժամանակ՝ ասես ընդգծելու համար մեր կորստի մեծությունն ու անդառնալիությունը:

ՎԱՀԱԳՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ
Արձակագիր

ԱԶԳ

Միջազգային

«Բարեւ, ես եմ»

Հիլարի Քլինթոնը սուկ ափսոսանք է հայտնել Ալիեւին WikiLeaks-ի հրապարակման առնչությամբ

Դեկտեմբերի 15-ն, ամենայն հավանականությամբ, Ադրբեջանի արտաքին գաղափարական ության «հերթական հաջողությունների» տարեգրության մեջ կգրվի ոսկե տառերով: Այդ օրը, ինչպես ադրբեջանական լրատվամիջոցներն են խանդավառ գրում (հետաքրքրական է՝ ինչո՞ւ մի քանի օր ուշացումով), Իլհամ Ալիեւին զանգահարել է ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը: Ըստ պաշտոնական հաղորդագրության՝ պետքարտուղարն ափսոսանք է հայտնել «Ադրբեջանին վերաբերող հրապարակումների առթիվ, որոնք տեղ են գտել WikiLeaks-ի կայքում եւ հավաստել, որ Ադրբեջանը Միացյալ Նահանգների համար մնում է «որպես կարեւոր գործընկեր»:

Հիլարի Քլինթոնն, այսպիսով, ակնարկ իսկ չի հնչեցրել, որ «այդ հրապարակումներն իրականությանը չեն համապատասխանում», ինչից հետեւում է, որ նրա զանգը եղել է զուտ արարողակարգային: Ավելի ճիշտ կլինի թերեւս եզրակացնել, որ Վաշինգտոնը պարզապես «հուղարկավորել է» Իլհամ Ալիեւի արտաքին քաղաքական ուղեգիծը, որ մինչեւ վերջին ժամանակներս ընդունված էր համարել «հավասարակշռված», եւ այժմ եկել է «ցավակցելու ժամանակը»:

Ի՞նչ է սպասվում առաջիկայում: ԱՄՆ-ը հավանաբար կփորձի լավագույնս օգտագործել հնարավորությունը: Բայց չպետք է բացառել, որ մյուսները նույնպես ձեռնպահ չեն մնա «գաղտնազերծումների» միջոցով Բաքվին զգուշացումներ անելու առիթն օգտագործելուց: Բացառված է, որ «մի անգամ ուրացողը» չուրանա երկրորդ եւ ավելի անգամ: Այսինքն, եթե ամերիկյան դիվանագետների հետ հանդիպումներում Իլհամ Ալիեւն իրեն թույլ է տվել ոչ պատշաճ արտահայտվել Թուրքիայի կամ Ռուսաստանի հասցեին, ապա ի՞նչ երաշխիք, որ ռուսաստանցի կամ թուրք զրուցակիցների հետ էլ նա նույն կերպ չի վարվել ամերիկացիների հանդեպ:

Մանավանդ որ Օբամայի նախագահության ամենասկզբից հարաբերությունները Բաքվի եւ Վաշինգտոնի միջեւ ակնհայտորեն բարվոք չեն: Հիշենք թեկուզ, որ Իլհամ Ալիեւը չընդունեց հորդորը եւ չմեկնեց Թուրքիա, երբ այնտեղ էր ժամանում Միացյալ Նահանգների նախագահը: Ի դեպ, դա պաշտոնն սանձնելուց հետո Օբամայի առաջին արտասահմանյան ուղեւորությունն էր, ինչին հետեւեց Վաշինգտոնի կողմից Իլհամ Ալիեւին անտեսելը միջուկային անվանգության հարցերով խորհրդաժողովի հրավիրյալների մեջ:

Հատկապես այդ շրջանին է համընկնում ռուս-ադրբեջանական հարաբերությունների որոշակի առաջընթացը: Ուստի գրեթե վստահաբար կարելի է ենթադրել, որ Իլհամ Ալիեւն այդ ընթացքում ռուս դիվանագետների եւ բարձրաստիճան պաշտոնյաների հետ շփումներում իրեն թույլ տված կլինի ոչ դիվանագիտորեն արտահայտվել ամերիկյան վարչակազմի հասցեին: Հիշենք նաեւ, որ դա հայ-թուրքական «պատմական հաշտեցման» քայլերի ժամանակաշրջանն էր, եւ պատկերը, կարծում ենք, ավելի առարկայականորեն կուրվագծվի:

Ամբողջ խնդիրն այն է՝ Մոսկվան տեղեկատվական արտահոսք կկազմակերպի՞, թե՞ ոչ: Առայժմ Ռուսաստանը բավական սառնաարտորեն է վերաբերվում ամերիկյան կողմի գաղտնազերծումներին: Սակայն հետաքրքրական է, որ ՌԴ արտաքին հետախուզության գերատեսչությունն արդեն իսկ սկսել է լրջորեն ուսումնասիրել WikiLeaks-ի հրապարակումները: Իսկ դա ինչ-որ բան նշանակում է:

Մինչ այդ, սակայն, ադրբեջանական լրատվամիջոցների հոսքերում վերջին օրերին նկատվում է «հավասարակշռության» ընդգծված խախտում՝ ի վնաս ռուսաստանյան ուղղության: Ճիշտ է, շատ բան արվում է ԵԱՀԿ ՄԽ «անգործության» գաղտնաթողի տակ, բայց բոլորին է հայտնի, որ ղարաբաղյան կարգավորման բանակցություններում 2008 թ. ի վեր առաջին ջութակը 32 տպագիր եւ 8 ինտերնետային լրատվամիջոց, շատ բան է ասում:

Պատահակա՞ն է, որ ԱՄՆ պետքարտուղարի հեռախոսազանգը համընկնում է ադրբեջանական լրատվամիջոցներում հակառուսաստանյան տրամադրությունների անզուսպ պոռթկումներին: Ո՞րն է որին նախորդել կամ հաջորդել: Այս հարցերն, իրոք, «գոյության իրավունք ունեն»: Չի՞ ուրվագծվում, արդյոք, որոշակի գործարք՝ «դուք մեզ՝ հակառուսաստանյան տրամադրություններ, մենք ձեզ՝ ափսոսանք ձեր կորուստների եւ անբարեկրթության մասին հրապարակումների առթիվ»: Բայց, ինչպես ռուսներն են ասում, «մահակը երկու ծայր ունի»: Եվ կարծես թե «մյուս ծայրն» արդեն իր մասին հիշեցնում է: Օրերս Arannews.ir կայքը տեղեկություն է տարածել, համաձայն որի՝ իրանական Արդեբիլ քաղաքի գլխավոր մզկիթում ուրբաթօրյա նամազին, որի ժամանակ քաղաքի հոգեւոր առաջնորդը շանթուկրակ է թափել ԱՄՆ կառավարության գլխին, ներկա է գտնվել Իրանում Ադրբեջանի արտակարգ եւ լիազոր դեսպանը:

Ի՞նչ է սա, եթե ոչ՝ որ իրանական կողմը նույնպես Ադրբեջանի դեմ «կոմպրոմատներ» ունի եւ պատրաստ է դրանք ներկայացնել ավելի մեծ ծավալով եւ ընդգրման տիրույթով: Եվ արդյո՞ք ենթադրություն չունի այն, որ ռուսաստանյան որոշ հայտնի լրատվամիջոցների ուշադրությունից չի վրիպում Ադրբեջանին վերաբերող որեւէ նոր բացահայտում:

Տարին, այսպիսով, Ադրբեջանի համար այնքան էլ բարեհաջող չի ավարտվում, եթե ավելին չասենք: Իլհամ Ալիեւը հավակնություններ ուներ «կամուրջ դառնալու Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ», բայց Վաշինգտոնն ամեն ինչ իրար խառնեց: Եվ այսօր նա ավելի շատ նման է շփոթված «կոչնականի», որի առջեւ կարծես բոլոր դռները բաց են, բայց դռներից ներս նրան ոչ ոք չի սպասում:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Քաթարը գազի արդյունահանման առաջատարն է

Քաթարը բնականի գազի արդյունահանման եւ արտահանման ծավալներով համաշխարհային առաջատարն է. Քաթարում գազի տարեկան արդյունահանումը կազմել է 77 մլն տոննա:

Քաթարը բնական գազի հետախուզված պաշարներով աշխարհում զբաղեցնում է երրորդ տեղը՝ Ռուսաստանից եւ Իրանից հետո: Նա գազ է մատակարարում 23 երկրի, եվրոպական երկրների գազի պահանջարկի 23 %-ը ապահովում է Քաթարը:

Քաթարի գազի ազգային կոնցեռնի՝ Qatar Gas-ի ղեկավարի խոսքով՝ Քաթարի ՀՆԱ-ի 32 %-ը բաժին է ընկնում գազարդյունահանմանը, իսկ նավթին՝ 28 %:-ը

Արժույթի միջազգային հիմնադրամի գնահատմամբ՝ 2011 թ. Քաթարում գազի արդյունաբերությունը կարող է աճել 20 %-ով, իսկ Քաթարի իշխանությունների ներկայացուցիչների եւ Քաթարի էներգետիկ ընկերությունների ղեկավարների միջեւ պայմանավորվածություն է ձեռք բերվել այս ոլորտում ազգային ռազմավարության համաձայն ծրագրի մշակման վերաբերյալ:

OPEC-ի անդամ երկրներից Քաթարը միակն էր, որը 2009-2010 թթ. կարողացել է ավելացնել նավթի եւ գազի արդյունահան ծավալները՝ ի տարբերություն մյուս խոշոր արտահանողների, որոնք համաշխարհային ճգնաժամի պատճառով սփռված էին կրճատել նավթի եւ գազի արդյունահանման ծավալները:

Պատրաստեց
ԼԻԼԻԹ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ԱՐԵՎԵԼՔ

Ճապոնիան զինվում է ընդդեմ ՉԺՀ-ի եւ ԿԺԴՀ-ի

Ճապոնիայի կառավարությունը ընդունել է առաջիկա տասը տարում երկրի զինված ուժերի զարգացման ռազմավարություն, որտեղ նշված են պաշտպանական քաղաքականության փոփոխությունները:

Փաստաթղթում գլխավոր վտանգներ են համարվում Չինաստանը եւ ԿԺԴՀ-ն, որոնցից Ճապոնիան բաժանված է ծովով: Օրերս ԿԺԴՀ-ն խոստովանել էր սեփական տարածքում ուրանի հարստացման գործարանի գոյության փաստը:

BBC-ն մեջբերում է փաստաթղթի այն մասը, որ ՉԺՀ զինված ուժերի ընդլայնումը «համընդհանուր սպառնալիք» է:

Ճապոնիան մտադիր է ոչնչացնել հակահրթիռային պաշտպանությունը, սեփական տարածքում տեղաբաշխել ամերիկյան Patriot կալանիչ հրթիռների լրացուցիչ մարտկոցներ: Իսկ տանկերի թիվը կրճատվելու է մեկ երրորդով:

Տոկիոն կուժեղացնի նաեւ իր նավատորմը, կավելացնի սուզանավերի թիվը, կարդիականացնի ռազմօդանավերը:

Առաջիկա տարիներին Ճապոնիայի հյուսիսում զինված ուժերը կրճատվելու են, փոխարենը ուժեղացվելու է հարավային կղզիների պաշտպանությունը:

Արեւելաչինական եւ Հարավչինական ծովերում չինական նավատորմի ընդլայնվող ներկայությունը լրջորեն մտահոգում է Ճապոնիային, նշում է BBC-ն: 2010-ի սեպտեմբերին որոշ վիճելի կղզիների պատճառով Տոկիո-Պեկին լարվածությունը խորացավ չինական ձկնորսանավի եւ ճապոնական պահականավերի բախումից հետո:

ԿԺԴՀ միջուկային ծրագիրը մտահոգության մեկ ուրիշ առիթ է Տոկիոյի համար: Վերջին տարիներին հյուսիսկորեացիները մի քանի հրթիռ են արձակել ճապոնական տարածքների վրայով, ինչպես նաեւ անցկացրել են միջուկային փորձարկումներ:

Փաստաթղթում ճապոնա-ամերիկյան դաշինքը անհրաժեշտ է համարվում տարածաշրջանային կայունության համար: Ճապոնիայում տեղաբաշխված է մոտ 52 հազար ամերիկացի զինծառայող:

Առաջիկա տասնամյակում Տոկիոն այնուամենայնիվ կփորձի «վստահական հարաբերություններ զարգացնել Չինաստանի եւ Ռուսաստանի հետ», ինչպես նաեւ ընդլայնել կապերը Եվրոմիության եւ ՆԱՏՕ-ի հետ:

Օբամայի քաղաքացիությունը վիճարկած փոխգնդապետը բանտարկվեց

ԱՄՆ ցամաքային զորքերի փոխգնդապետ Թերենս Լակինը վեցամսյա բանակային բանտարկության է դատապարտվել եւ ծառայությունից հեռացվել է, իր իսկ խոսքերով, «անօրինական նախագահ» Բարաք Օբամայի հրամանը չկատարելու համար: Այդ մասին հաղորդում է Ասոշիեյթեդ Պրես գործակալությունը:

Երեկ ավարտված դատական նիստում մեղադրող կողմը պահանջել էր երկամյա բանտարկություն եւ մեղադրյալի հեռացում զինված ուժերից: Մեղադրող կողմը իր դիրքորոշումը բացատրում էր նրանով, որ Լակինը ոչ միայն հրաժարվել է կատարել վերադասի հրամանը, այլեւ սեփական վիճակը վերածել է քաղաքական խեղկատակության:

Փոխգնդապետի դատապաշտպանը իր հերթին խնդրել է հաշվի առնել նրա 17 տարվա ծառայությունը, ներողամիտ լինել եւ չհեռացնել զինված ուժերից: Պաշտպանության կարծիքով, մեղադրյալի վրա վատ է ազդել նրա նախկին փաստաբանը, որը նրան խորհուրդ է տվել համառորեն պնդել Օբամայի անօրինականության վարկածը:

Ինքը՝ Լակինը, դատական նիստում խոստովանել է, որ բանակը լավագույն տեղն է գործող նախագահի քաղաքացիության հարցը քննելու համար: Նա երդվյալներին խնդրել է իրեն չհեռացնել ծառայությունից: Սակայն երդվյալներն այնուամենայնիվ նրան հեռացրել են ծառայությունից, այնպես որ փոխգնդապետը չի կարողանա աղագայում ստանալ 20-ամյա ծառայության դիմաց վճարվող վետերանային թոշակ:

Լակինի հետ կապված միջադեպը տեղի էր ունեցել 2010-ի գարնանը: Այն ժամանակ նա հրաժարվել էր Աֆղանստան ծառայության տեղափոխվել, ասելով, որ հրամանն արձակողը Բարաք Օբաման է, որը ծնվել է ԱՄՆ-ից դուրս եւ պարբերաբար դարձել պետության ղեկավար:

Լակինը ինտերնետում արտավ ծավալեց, հուսալով, որ դա Օբամային կստիպի հանրությանը ներկայացնել իր նախագահության օրինականության ապացույցներ: Սակայն կարգազանց փոխգնդապետով սկսեց հետաքրքրվել դատարանը:

Լեւոն Լաճիկյան. «Գյումրի, իմ սեր»

Մշակույթի նախարարության «Ոսկե մեդալ» անվանի գեղագեսին

Ճանաչված գեղագես, մշակութային մեկնաբան, այժմ նաեւ նկարիչ **Լեւոն Լաճիկյանի** համար իր ծննդավայր Գյումրին, միաժամանակ, հոգու ծննդավայր է: Հենց յուրօրինակ այս քաղաքն է իր ուրույն կերպարով ու մշակութաստեղծ միջավայրով, գումարվելով ժառանգաբար սացած շնորհին, նրան ներշնչել գեղեցիկի զգացողությունը, որը հետո զարգանալով՝ դարձել է գեղագեսի մասնագիտական հայցք, աղա՝ նաեւ առինքնող գիծ ու պատկեր... Եթե սրան ավելացնենք եւ մայրաքաղաքում աղրող արվեստագեսի չընդհատվող մշտական կապը հարազաս քաղաքի հետ, եւ վերջինիս պատկերների, տեսարանների ծանրակշիռ ներկայությունը իր ստեղծած գրաֆիկական գործերի շարքում, աղա Գորիսում ու Երեւանում այս տարի կազմակերպված առաջին երկու անհատական ցուցահանդեսներից հետո բնական ու սպասելի էր, որ այդ գործերը ցուցադրվեն նաեւ հեղինակի ծննդավայրում:

Լաճիկյանի երրորդ անհատական ցուցահանդեսը, «Գյումրի, իմ սեր» խորագրով, դեկտեմբերի 15-ին բացվեց Գյումրու քաղաքապետարանի նորակառույց շենքի գեղեցիկ ճեմասրահում, այստեղ նաեւ հիմք դնելով նոր ավանդույթի: Այս վերջին հանգամանքն իր ողջույնի խոսքում նշեց նաեւ քաղաքապետ **Վարդան Ղուկասյանը**: Ցուցադրանքում ներկայացված են չորս տասնյակ գծանկարչական աշխատանքներ, որոնց թվում ուղիղ կեսը Գյումրու շարքն է:

Միքայել Նալբանդյանի անվան մանկավարժական ինստիտուտի նկարչության ամբիոնի վարիչ, արվեստաբան **Լաուրա Աթանեսյանը**, քաղաքի գեղագիտական կենտրոնի տնօրեն, նկարչուհի **Սուսաննա Մկրտչյանը** եւ ուրիշներ, ողջունելով այս ցուցահանդեսի բացումը, ջերմ խոսքով գնահատեցին Լաճիկյանի արվեստը: Թերեւս խորհրդանշական էր նաեւ, որ հենց այստեղ հրապարակվեց ՀՀ մշակույթի նախարարի հրամանագիրը նրան նախարարության բարձրագույն պարգեւով՝ ոսկե մեդալով պարգեւատրելու մասին: Անվանի գեղագեսը նման գնահատանքի արժանացել է արդի հայ մշակույթին մատուցած նշանակալի ծառայությունների համար, ինչպես նաեւ ստեղծագործական գործունեության 30-ամյա հոբելյանի առթիվ:

- Այս ցուցահանդեսը ես ներկայացնում եմ որպես հոգու պարտք իմ քաղաքին,- բացման շնորհակալական խոսքում մասնավորապես ասաց Լեւոն Լաճիկյանը: -Ես ինձ համար վերջնականապես պարզել եմ այն հարցի պատասխանը, թե ինչու են այստեղ շատ արվեստագեսներ ծնվում: Որովհետեւ միջավայրը նպաստավոր է: Որովհետեւ այստեղ գեղեցիկի հանդեպ նախասեղծ սեր կա, աստվածային սեր...

Այդ սիրով են ներշնչված Լաճիկյան-նկարչի գործերը: Ու նաեւ՝ իր համար Գյումրին եղել ու մնում է արվեստի կամ ճշմարիտ արժեքի գնահատման, այդ իմաստով լակմուսի թղթի արժեք ունեցող ամենալուրջ փորձարարը: Ահա թե ինչու նա միայն առաջին երկու ցուցահանդեսների հաջողությունից հետո համարձակվեց իր գործերը այստեղ ներկայացնել:

Բայց Լաճիկյանի ներկայացրած ցուցադրանքը հետաքրքրական է նաեւ նրանով, որ ինքը Գյումրին չի զատում մնացյալ աշխարհից ու իր գծանկարներում ցույց տալով նաեւ, ասենք, Փարիզը, Նյու Յորքը ու դրանց կողքին՝ Գյումրին, բոլորին տեսանելի է դարձնում, որ վերջինս որպես քաղաքային միջավայր բնավ չի զիջում, եթե ոչ ինչ-ինչ կողմերով նաեւ գերազանցում է նույնիսկ նշանավոր շատ քաղաքների: Այսինքն նկարչի նպատակը, գեղագիտականից զատ, նաեւ այս քաղաքի իրական արժեքն ու գեղեցկությունը այլոց ցույց տալը, այն ճանաչել ու սիրել տալն է: Պատահական չէ, որ հաստատես Երեւանում նրա գործերը դիտողներից շատերն ասել են, թե ուզում են գալ, տեսնել Գյումրին:

Իսկ քաղաքի այսօրվա դեռ չթոթափված խեղճությունն արվեստագեսը ժամանակավոր է համարում: «Ես ամեն օր աղոթում եմ,- ասաց նա,- որ ժողովուրդն այդ տնակներից ի վերջո ձերբազատվի, վերջնականապես դուրս գանք այս վիճակից ու քաղաքը քայլի այն արժանապատիվ հունով, որին ինքը կոչված է...»:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

ԼՈՒՐԵՐ ԵՒ ԵՈՐՔԵՆ

Տօնական օրերու առթիւ հանդիպում թէֆէանականներու

Անցեալէն եկած սովորութիւն մը եւս վերահաստատուեցաւ Մեծագոյն Նիւ Եորքի ԹՄՄ մասնաճիւղէն ներս: Ամէն տարեփակէն առաջ սովորութիւն էր, որ թէֆէեանականներ տօնական օրերու առթիւ հաւաքուէին եւ զիրար շնորհաւորէին, մաղթելով բեղմնաւոր տարի մը միութեան եւ սէր ու միութիւն թէֆէեանականներու միջեւ:

Այս տարի, դեկտեմբեր 11-ի երեկոյեան, ԹՄՄ-ի վարչական անդամներու եւ յանձնախումբերու անդամներ դարձեալ հաւաքուեցան տէր եւ տիկին Յակոբ Վարդիվառեաններու բնակարանը:

Մասնաճիւղի ատենադիրը՝ Յակոբ Վարդիվառեան շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք անվերադարձ աջակցեցան իրեն անցնող երկու տարիներուն եւ Թէֆէեանի ոգին տարածեցին Մեծագոյն Նիւ Եորքի այս համայնքէն ներս, գործադրելով եզակի ձեռնարկներ, ինչպէս՝ յիշատակումը Հայաստանի բանակի օրուան, Հայաստանի անկախութեան տարեդարձին, թատերական երեք ձեռնարկներ, մեծարանքներ վաստակաշատ մշակութային գործիչներու՝ խմբագիր Տոքթ. Նուպար Պէրպէրեանի, բանաստեղծ Ժագ Յակոբեանի, թատրոնի գործիչ Գրիգոր Սաթամեանի եւայլն: Ու այս ամբողջ աշխատանքի որպէս վարձատրութիւն մասնաճիւղին շնորհուեցաւ այս տարուան ԹՄՄ «Տիգրան Սմսարեան» բաժակը, որ կը տրուի միութեան ամենէն աշխատունակ մասնաճիւղին:

Այս հանդիպման հրաւիրուած էր ՄԱԿ-ի մօտ ՀՀ դեսպան Կարէն Նազարեան, որ ջերմ բարեկամն է, տարիներէ ի վեր, Թէֆէեանի մեծ ընտանիքին: Ան յայտնեց իր գնահատանքը այս առթիւ եւ նորանոր նուաճումներ մաղթեց ու գործակցութեան ձեռք երկարեց թէֆէեանականներուն հետ յառաջիկայ տարի, Հայաստանի անկախութեան խաներորդ տարեդարձը բարձրակարգ կերպով նշելու: Ըսենք, որ մեր երրորդ հանրապետութեան տարեդարձները մեծ շուքով տօնող կազմակերպութիւնը միշտ ալ եղած է Թէֆէեան մշակութային միութիւնը աշխարհի այս մեծագոյն ոստանէն ներս:

Խօսք առաւ կրթական մշակ, տասնամեակներով իր նպաստը բերած հայ դպրոցին, դասագիրքերու հեղինակ եւ զանազան կրթական ծրագիրներու նախաձեռնող Սիլվա Տէր-Ստեփանեանը, որ երկարամեայ անդամն է ԹՄ-ին: Ան յորդորեց ներկաները աւելի մեծ սիրով կապուելու Հայաստանին եւ աւելի ջերմօրէն պատշաճելու Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հեղինակութիւնը:

Սրտի խօսք առին նաեւ մասնաճիւղի նախկին ատենադիրներ Միսաք Պողոսեան, որ կոչ ըրաւ բոլորուիլ Թէֆէեանի շուրջ, այն քաջ հաւատով, որ հայրենասիրական մնայուն գործ մըն է զոր կը կատարէ այս մեծ միութիւնը: Նաեւ խօսք առաւ Սրբոց Նահատակաց ամէնօրեայ վարժարանի տնօրէնուհին տիկին Զարմինէ Պողոսեանը, որ շնորհակալութիւն յայտնեց ԹՄՄ-ին իր գլխաւորած վարժարանէն ներս գրական մրցանակ մը հատատելուն համար: Վահան Թէֆէեանի բանաստեղծութիւններէն արտասանեց տիկին Սեդա Ճեմրեճեան:

Երգով, նուագով ու զուարթախօսութեամբ Յարութ Չաթմաճեան, Մելինէ Խիկոյեան, Միսաք Պողոսեան ու Սիրվարդ Տեմիրճեան մթնոլորտը էնցուցին:

Իրենց ներկայութեամբ զօրակցեցան Թէֆէեանի վարչականներուն ազգային ծանօթ դէմքեր ընկերուհի Իրմա Տէր-Ստեփանեանը եւ ընկեր Տոքթ. Յակոբ Կիւլեֆճեանը: Այս հանդիպման ներկայ գտնուեցան նաեւ ՌԱԿ շրջանային վարչութեան անդամներ ընկերներ Վարդան Իլանճեան, տոքթ. Վաղինակ Դարբինեան ու Գրիգոր Սալպաճեան:

Նոր մարտահրաւէրներ դիմակայելու եւ նոր նախաձեռնութիւններու յանձնառու ըլլալու խոսքումով, վստահաբար յառաջիկայ տարի դարձեալ հայութեան պիտի ներկայանան թէֆէեանականները, աւելի՛ զօրաւոր, աւելի՛ աշխոյժ:

ԹՂԹԱԿԻՑ

80-ԱՄՅԱԿ

Նա մի մարդ էր, որ ապրելով ապրեցնում էր ուրիշներին...



«Արվեստների պատկերասրահ» մշակութային հիմնադրամը (նախագահ Մարիամ Շահինյան, տնօրեն Գարիկ Նազարյան) ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ դեկտեմբերի 19-ին Արամ Խաչատրյան համերգասրահում կանցկացնի սիրված կոմպոզիտոր **Ռոբերտ Պետրոսյանի** 80-ամյակին նվիրված հոբելյանական երեկոն:

Երեկ մշակույթի նախարարությունում կազմակերպիչները հանդիպեցին լրագրողների հետ: **Տկն Շահինյանը** նշեց, որ «Վերադարձի» փառատոնից հետո առաջին անգամ նախաձեռնել են Ռոբերտ Պետրոսյանի հոբելյանական երեկոն, որի ընթացքում կհնչեն կոմպոզիտորի կամերային, սիմֆոնիկ, երգչախմբային, էստրադային, փողային, ժողովրդական, վոկալ եւ գործիքային ստեղծագործությունները, կցուցադրվի կոմպոզիտորի ստեղծագործական կյանքին վերաբերող վավերագրական ֆիլմ: Երեկոյի ընթացքում առաջին անգամ կհնչեն Ռոբերտ Պետրոսյանի գործերից «Արեգա» նորաստեղծ կամերային երգչախմբի (գեղեկ Գայանե Բաղդասարյան) կատարմամբ: Ի դեպ, վերջինս կազմավորվել է օրերս՝ հիմնադրամի եւ մշակույթի նախարարության աջակցությամբ: «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախմբի գեղեկ **Տիգրան Հեքեքյանը** ներկայացնելով Ռոբերտ Պետրոսյանին, նշեց. «Նա մի մարդ էր, որ ապրելով ապրեցնում էր ուրիշներին»: Այսօր էլ սիրված կոմպոզիտորի ստեղծագործությունները մասն են կոնսերվատորիայի ուսուցման ծրագրի: Ռոբերտ Պետրոսյանը եղել է Հանրային ռադիոյի եւ հեռուստատեսության «Արեւիկ» մանկական անսամբլի հիմնադիրը ու մի քանի տասնյակ երգեր է գրել նրանց համար: «Ռոբերտ Պետրոսյանի հետ 25 տարի աշխատել եմ,- նշեց Տ. Հեքեքյանը եւ ավելացրեց,- նա մեծ արվեստագետ է, վկան նրա ստեղծագործությունները բոլոր ժանրերում: Նրա թողած հարուստ ժառանգությունը դեռ շատ երկար կհնչի, քանզի այն դարձել է շատ սիրված: Նա իր կենսախինդությամբ, իր կյանքով միշտ ոգեւորում է դիմացինին: 25 տարի իմ երգչախմբերը եղել են Ռ. Պետրոսյանի գործերի առաջին կատարողները ու այժմ էլ շարունակում ենք կատարել»: Ռոբերտ Պետրոսյանը ծնվել է Երեւանում եւ երաժշտական կրթություն ստացել պրոֆ. Է. Բաղդասարյանի եւ Գ. Եղիազարյանի դասարաններում: Կոմպոզիտորը նաեւ զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: Շուրջ 10 տարի Ռ. Պետրոսյանը եղել է Ա. Մերանգուլյանի անվ. ժող, գործիքների անսամբլի դիրիժորը, 1995-ին ՀՀ ՊՆ Սպայի տանը ստեղծեց «Էլեգիա» էստրադային համույթը, գրել է բազմաթիվ երգեր նախարարության «Ազատամարտիկ» մանկական համույթի համար: Ռոբերտ Պետրոսյանը գրել է նաեւ ԵԿՄ-ի հիմնը, որի համար արժանացել է ՀՀ ՊՆ ոսկե մեդալին: Կոմպոզիտորի ստեղծագործությունները մշտապես արժանացել են մրցանակների գրեթե բոլոր միջազգային եւ տեղական մրցույթներում:

Կյանքի վերջին տարիներին Ռ. Պետրոսյանը Արարատյան հայրապետական թեմի հայորդյաց տների գեղագիտական կենտրոնի երաժշտական խորհրդատուն էր: Կոմպոզիտորի 77 ստեղծագործություն արժանացել են ԽՍՀՄ եւ հանրապետական մրցանակների: Այսօր Ռ. Պետրոսյանի թողած արժեքավոր ժառանգությունը ընդգրկում է 300-ից ավելի հեղինակային եւ 300 մշակված եւ գործիքավորած ստեղծագործություններ, որոնցով համալրվել է ռադիոյի ձայնադարանը: Մոտ 2000-ից ավելի ստեղծագործությունների հեղինակ է Ռոբերտ Պետրոսյանը, սակայն ցավոք, մինչեւ այժմ միայն երկու փոքր հրատարակություններ են նվիրվել սիրված կոմպոզիտորի գործունեությանը: Եվ ինչպես հանդիպման ընթացքում նշեցին կոմպոզիտորի դուստրերը, նախարարության աջակցությամբ շուտով կտպվի մեկ նոր գիրք: Եվ ինչպես սիրում էր ասել Ռոբերտ Պետրոսյանը՝ «Միշտ անկեղծ ու բաց եմ եղել աշխարհին...», այսօր էլ նրան հիշողները բարձր են գնահատում նրա դերը մեր երաժշտարվեստում:

Հոբելյանական երեկոն անց է կացվելու առաջին տիկին Ռիտա Սարգսյանի հովանու ներքո, քաղաքապետարանի աջակցությամբ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

Ոսկե մեդալ Էդուարդ Տեր-Ղազարյանին

«Առնո Բաբաջանյան» համերգասրահում տեղի ունեցավ Էդուարդ Տեր-Ղազարյանին նվիրված մեծարման երեկո: Ճեմասրահում Տեր-Ղազարյանի ստեղծած մանրաքանդակների ցուցադրությունն էր:

Երեկոյի ընթացքում Տեր-Ղազարյանին իրենց կատարումներով ողջունեցին «Շելլ» դաշնամուրային տրիոն, Երեւանի կամերային երգչախումբը, Տեր-Ղազարյանի թոռնուհին՝ Արեւիկը, «Բերդ» պարային համույթը:

ՀՀ մշակույթի նախարարությունը բարձր գնահատելով Տեր-Ղազարյանի գործունեությունը՝ պարգեւատրեց նրան ՀՀ մշակույթի նախարարության ոսկե մեդալով: Էդուարդ Տեր-Ղազարյանը միկրոքանդակագործ է, ջութակահար, երաժշտական գործիքներ պատրաստող վարպետ, ծաղրանկարիչ, գիտնական-գյուտարար:

Նրա ստեղծած «հրաշքներից» են «Վիոլա պամպոզա» ալտը, «Չարլի Չապլին»՝ ասեղի անցքում, գնացքը՝ մարդկային մազի մեջ:

Պարոն Տեր-Ղազարյանը ստեղծել է 1000-ից ավել միկրոքանդակներ, որոնք անզեն աչքով տեսանելի չեն՝ ջութակ, ալտ, թավջութակ, նկարել է 1.500.000 ծաղրանկարներ, ունեցել է 30.000 համերգ:

Տեր-Ղազարյան արվեստագեսը, գիտնական-գյուտարարը պատրաստում է նաեւ բարդ վիրահատությունների համար բժշկական գործիքներ, անզեն աչքով անտեսանելի բժշկական օղակներ:

Երեկոյի անկաշկանդ, բարեկամական մթնոլորտում Էդուարդ Տեր-Ղազարյանը պատասխանեց հարցերի, պատմեց իր կյանքից զարմանահրաշ, ծիծաղաշարժ պատմություններ՝ կապված հայտնի մարդկանց, պետական-քաղաքական գործիչների հետ: Հանդիսատեսը ծափողջույններով ճանապարհեց 20-21-րդ դդ. «հրաշքների» արարչին:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎՍԵՓԻՄՅԱՆ

ԱԶԳ **Մարզական**

Դարչինյանը հետեւությունների է հանգել

Քաբային երկու կարգերում աշխարհի նախկին չեմպիոն Վախթանգ Դարչինյանը BoxingScene.com կայքէջի թղթակցի հետ զրույցում անդրադարձել է մեքսիկացի Աբներ Մարեսի հետ օրերս կայացած մենամարտին: Ինչպես հայտնի է, թեթեւքաբային կարգի 4 ուժեղագույն բռնցքամարտիկների մրցաշարի կիսաեզրափակիչում Դարչինյանը միավորներով զիջեց մրցակցին: Մրցավարներից երկուսը հաղթանակը շնորհել էին Աբներ Մարեսին, մեկը հաղթող էր ճանաչել հայ բռնցքամարտիկին: Մենամարտից հետո Դարչինյանն իր դժգոհությունն էր արտահայտել մրցավարությունից:



Օրեր անց Դարչինյանն այլ կերպ է գնահատել մենամարտի արդյունքը՝ գովեստի խոսքեր հղելով Աբներ Մարեսի հասցեին:

«Ինձ համար շատ հիասթափեցնող պահ էր երիտասարդ եւ լավ որակներ ունեցող բռնցքամարտիկ Աբներ Մարեսին պարտվելը: Շնորհավորում եմ նրան: Նա շատ ամուր բռնցքամարտիկ է, որը հիանալի էր մենամարտում: Նույնիսկ աշխարհի չեմպիոնի տիտղոսը 7 անգամ նվաճելուց հետո այս մենամարտում հասկացա կարեւոր մի բան, որ չի կարելի հանդիպման ելքը թողնել մրցավարների հայեցողությանը: Հանդիպումից հետո հարկավոր էր խոսել այն մասին, թե ինչպիսի հիանալի մենամարտ անցկացրինք Մարեսի հետ, այլ ոչ թե սխալ մրցավարության: Իհարկե, դժվար է ընդունել պարտությունը միավորներով, երբ վստահ ես, որ հաղթել ես: Ոմանք գտնում էին, որ Աբներն է հաղթել, ոմանց կարծիքով ես էի արժանի հաղթանակի, մյուսներն էլ հակված էին ոչ-ոքի արդյունքի: Զայրացած եմ, որ պարտվեցի, սակայն Մարեսի վրա զայրացած չեմ: Նա հարգանքով էր վերաբերվում ինձ ողջ մենամարտի ընթացքում: Մենք իսկական մենամարտ անցկացրինք եւ հուսով եմ, որ կրկին կարող ենք հանդիպել: Ինձ դուր եկավ նրա հետ մենամարտելը: Կարծում եմ նա էլ ինձ նման պատրաստ է հանուն երկրպագուների ռիսկի դիմել: Անհամբերությամբ եմ սպասում Պերեսի հետ հանդիպմանը: Գիտեմ, որ ճակատամարտ է սպասվում: Բայց արդեն նույն սխալները թույլ չեմ տա: Այս անգամ արդեն ճակատագիրս մրցավարներին չեմ վստահի», նշել է Վախթանգ Դարչինյանը:

«Արիսը» փակեց «Ատլեթիկոյի» ճանապարհը

12 հանդիպումներով ավարտվեց ֆուտբոլի Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարը: 1/16 եզրափակիչի վերջին 3 ուղեգրերին տիրեցին հունական «Արիսը», ֆրանսիական «Լիլը» եւ բելգիական «Անդերլեխտը»: Վերջինիս հաջողությանը նպաստեց ՌԴ չեմպիոն «Զենիթը», որն ավարտական խաղում հյուրընկալվելիս 3-0 հաշվով պարտության մատնեց հունական ԱԵԿ-ին: «Զենիթը» գերազանց անցկացրեց ողջ մրցաշարը՝ հաղթանակով ավարտելով բոլոր 6 հանդիպումները: Իսկ «Անդերլեխտը» սեփական հարկի տակ 2-0 հաշվով հաղթելով «Հայդուկին», վաստակեց 7 միավոր եւ խփած ու բաց թողած գնդակների տարբերությամբ գերազանցեց ԱԵԿ-ին:

Հունական «Արիսը» գլխավոր անակնկալը մատուցեց՝ պայքարից դուրս թողնելով Մադրիդի «Ատլետիկոյին»: Բ խմբում հանդես եկող «Արիսը» սեփական հարկի տակ 2-0 հաշվով պարտության մատնեց նորվեգական «Ռուսենբորգին» ու վաստակեց 10 միավոր: Իսկ ահա «Ատլետիկոն» խմբի առաջատար «Բայերի» հետ արտագնա խաղում բավարարվեց ոչ-ոքի (1-1) արդյունքով ու մրցաշարն ավարտեց 8 միավորով՝ դուրս մնալով հետագա պայքարից:

Գ խմբում 2-րդ ուղեգրի բախտը վճռվեց ֆրանսիական «Լիլի» եւ բելգիական «Գենտի» մրցավեճում: Հաջորդ փուլ մտնելու համար «Լիլին» միայն հաղթանակ էր անհրաժեշտ, ինչի որ «Գենտին» զիջում էր 2 միավորով: Եվ Ռուդի Գարսիայի սաներին հաջողվեց կատարել խնդիրը՝ մրցակցին պարտության մատնելով 3-0 հաշվով:

Մյուս 3 խմբերում ուղեգրերի տերերը ժամկետից շուտ որոշվել էին: Ա խմբում վերջին տուրում որոշվեց հաղթողը: 1-ին տեղը զբաղեցրեց «Մանչեսթր Սիթին», որը Թուրքիայում ոչ-ոքի (1-1) ավարտեց հանդիպումը «Յուվենտուսի» հետ: Անգլիական ակումբը վաստակեց 11 միավոր: Նույնքան միավոր վաստակեց նաեւ լեհական «Լեխը»՝ Ավստրիայում 1-0 հաշվով հաղթելով «Զալցբուրգին»: Սակայն խփած եւ բաց թողած գնդակների տարբերությամբ «Լեխը» զիջեց «Մանչեսթր Սիթիին»:

Դ խմբի առաջատար գերմանական «Շտուտգարտը» վերջին խաղում էլ աչքի ընկավ արդյունավետությամբ՝ 5-1 հաշվով ջախջախելով դանիական «Օդենսեին»: «Շտուտգարտը» վաստակեց 15 միավոր: 2-րդ տեղում ընթացող «Յանգ Բոյզն» առաջատարից հետ մնաց 6 միավորով: Շվեյցարացիները հյուրընկալվելիս 0-1 հաշվով զիջեցին իսպանական «Խետաֆեին»:

Ի խմբում 1-ին տեղի հարցը պետք է վճռվեր հոլանդական «Էյնդհովենի» եւ Խարկովի «Մետալիստի» մրցավեճում: Վերջինիս միայն հաղթանակ էր անհրաժեշտ մրցակցին շրջանցելու համար: Սակայն ուկրաինացիներին դա չհաջողվեց: Դարպասները մնացին անառիկ: Մյուս խաղում խմբի հետնապահ հունգարական «Դեբրեցենը», որ պարտվել էր նախորդ 5 հանդիպումներում, սեփական հարկի տակ վերջապես առաջին միավորները վաստակեց՝ 2-0 հաշվով հաղթելով իտալական «Սամպդորիային», որն արդեն կորցրել էր ուղեգիր նվաճելու հնարավորությունը:

Զույգերը հայտնի են

Նիոնում կայացած վիճակահանությամբ հայտնի դարձան չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչի զույգերը:

«Ռոմա»-«Շախտյոր»
«Միլան»-«Տոտենհեմ»
«Վալենսիա»-«Շալկե-04»
«Ինտեր»-«Բավարիա»
«Լիոն»-«Ռեալ»
«Արսենալ»-«Բարսելոնա»
«Մարսել»-«Մանչեսթր Յունայթեդ»
«Կոպենհագեն»-«Չելսի»

Առաջին հանդիպումները կկայանան 2011-ի փետրվարի 15-16-ին եւ 22-23-ին: Պատասխան խաղերը տեղի կունենան մարտի 8-9-ին եւ 15-16-ին:

ՈՒԵՖԱ-ն ներեց «Սպարտակին»

ՈՒԵՖԱ-ի կարգապահական կոմիտեն բավական մեղմ պատիժ սահմանեց Մոսկվայի «Սպարտակի» համար՝ ակումբին տուգանելով 75 հազար եվրոյով: ՈՒԵՖԱ-ն նաեւ զգուշացրել է, որ եթե առաջիկա 2 տարում կրկնվի Սլովակիայում տեղի ունեցած միջադեպը, ապա «Սպարտակը» եվրոգավաթի խաղարկության հանդիպումը սեփական հարկի տակ կանցկացնի առանց հանդիսականների: Հիշեցնենք, որ «Ժիլինայի» հետ Սլովակիայում կայացած Եվրոպայի լիգայի խմբային մրցաշարի հանդիպման ժամանակ «Սպարտակի ֆանատներն անկարգություններ էին հրահրել տրիբունաներում, ճայթռուկներ էին նետել խաղադաշտ, որի հետեւանքով մրցավարը սիրտը եղել խաղը 20 րոպեով ընդհատել:

Հոլիֆիլդը երազում է չեմպիոնական գոտու մասին

Գերծանրաքաշային կարգում աշխարհի նախկին բացարձակ չեմպիոն Էվանդեր Հոլիֆիլդը չեմպիոնական գոտին վերադարձնելու հույսը դեռ չի կորցրել: 48-ամյա անվանի բռնցքամարտիկը 2011-ի մարտի 5-ին Դանիայում կմենամարտի այդ երկրի ներկայացուցիչ, 45-ամյա Բրայան Նիլսենի հետ, որը վերջին անգամ ռինգ էր դուրս եկել 2002-ին: Արդեն ստորագրվել է պայմանագիրը Նիլսենի մենամարտերի կազմակերպիչ գերմանական Sauerland Event պրոմոութերական ընկերության հետ: Ինչ վերաբերում է չեմպիոնի տիտղոսի համար մենամարտին, ապա Հոլիֆիլդը ցանկանում է հաջորդ տարվա ամռանը ռինգ դուրս գալ WBA-ի վարկածով գերծանրաքաշային կարգի աշխարհի ներկայիս չեմպիոն Դեւիդ Հեյի հետ: Հոլիֆիլդի պրոմոութեր Քեն Սանդերսի կարծիքով, երկու բռնցքամարտիկների մարտածերն էլ նույնն են, ուստի շատ հետաքրքրական մրցավեճ կստացվի:

ՇԱԽՄԱՏ

Ավետիք Գրիգորյանն առաջատարների շարքում

Բուլղարիայում ընթացող շախմատի մրցաշարի 5-րդ տուրն էլ հաջող էր ՀՀ չեմպիոն Ավետիք Գրիգորյանի համար: Նա 4-րդ հաղթանակը տոնեց՝ պարտության մատնելով Միոդրագ Պերունովիչին: 5 տուրից հետո Գրիգորյանը 4,5 միավորով Բորիս Սավչենկոյի, Վլադիմիր Գեորգիեւի, Պյոտր Կորոբկովի, Տամիր Նաբատուի եւ Իոանիս Նիկոլաիդիսի հետ գլխավորում է աղյուսակը: 6-րդ տուրում Ավետիքը կմրցի Պյոտր Կորոբկովի հետ:

Սավչենկոն ու Նաբատուն հաշտություն կնքեցին: Գեորգիեւը հաղթեց Նանկո Դոբրեւին, Կորոբկովը պարտության մատնեց Վասիլ Սպասովին, Նիկոլաիդիսն էլ առավելության հասավ Աթանասիոս Մաստրովասիլիսի նկատմամբ:

Հենրիխ Մխիթարյանը 2-րդն է

Դոնեցկի «Շախտյորի» պատշտոնական կայքէջում անցկացված հարցման արդյունքներով Հենրիխ Մխիթարյանը թիմի լավագույն ֆուտբոլիստների ցանկում 2-րդն է ճանաչվել: Հարցման 5258 մասնակիցներից 1327-ն իրենց ձայնը տվել են հայ ֆուտբոլիստին: Հենրիխը ստացել է ձայների 25,24 տոկոսը: Նրան ընդամենը 21 ձայնով գերազանցեց «Շախտյորի» ավագ Դարիո Սռնան, որը ճանաչվեց 2010-ի թիմի լավագույն ֆուտբոլիստ: Նշենք, որ Սռնան եւ Մխիթարյանը մրցույթում մրցակցությունից դուրս էին: Նրանք միասին հավաքեցին ձայների մոտ 51 տոկոսը: Համեմատության համար նշենք, որ 3-րդ տեղը զբաղեցրած Անդրեյ Պյատովն ընդամենը 372 ձայն է հավաքել:

Հիշեցնենք, որ օրերս նմանատիպ քվեարկության արդյունքում Հենրիխ Մխիթարյանը ճանաչվել էր Դոնեցկի «Շախտյորի» լավագույն լեգեոնական՝ առաջ անցնելով Դարիո Սռնայից:

Ալեքսանդր Գրիգորյանը կմարզի Ռոման Բերեզովսկուն

Մերձմոսկովյան «Խիմկի» թիմի գլխավոր մարզիչ է նշանակվել Ալեքսանդր Գրիգորյանը: Հիշեցնենք, որ «Խիմկիում» է հանդես գալիս Հայաստանի ազգային հավաքականի դարպասապահ, 36-ամյա Ռոման Բերեզովսկին, որը դեռեւս մտադիր չէ հրաժեշտ տալ ֆուտբոլին:

Ալեքսանդր Գրիգորյանը մինչեւ 2009-ը աշխատել է միայն կանանց թիմերում: Մարզչական գործունեությունը նա սկսել է 1999-ին որպես կանանց «Էներգիա» թիմի ավագ մարզիչ: 2002-ին գլխավորելով Տոլյատիի «Լադան», Գրիգորյանը թիմին դարձրեց ՌԴ եռակի գավաթակիր եւ 2004-ի չեմպիոն: 2007-ին նրան հրավիրեցին գլխավորելու Պերմի «Զվեզդան»: Վերջինս Գրիգորյանի գլխավորությամբ դարձավ առաջնության առաջատար ակումբներից մեկը՝ նվաճելով երկրի չեմպիոնի եւ գավաթակրի տիտղոսները, հասնելով մինչեւ ՈՒԵՖԱ-ի գավաթի եզրափակիչ: Միայն անցյալ տարի հայազգի մարզիչը սկսեց աշխատել տղամարդկանց ֆուտբոլային թիմի հետ՝ գլխավորելով «Նիժնի Նովգորոդը»:

World Soccer-ն անվանում է դափնեկիրներին

Ավանդույթի համաձայն World Soccer ամսագիրը մրցաշրջանի ավարտին որոշում է տարվա դափնեկիրներին: Ընթերցողների շրջանում անցկացրած հարցման արդյունքներով 2010-ի աշխարհի լավագույն ֆուտբոլիստ է ճանաչվել Իսպանիայի հավաքականի եւ «Բարսելոնի» կիսապաշտպան Խավին: Նրա օգտին քվեարկել է հարցման մասնակիցների 25,8 տոկոսը: Խավիի թիմակից, արգենտինացի Լիոնել Մեսին, որն անցյալ տարվա դափնեկիրն էր, ձայների 24,1 տոկոսով գրավել է 2-րդ տեղը: Լավագույն եռյակը եզրափակել է Հոլանդիայի հավաքականի եւ իտալական «Ինտերի» ֆուտբոլիստ Վեսլի Սնեյդերը (17,3 տոկոս):

Լավագույն տասնյակում տեղ են գրաղեցրել նաեւ Մադրիդի «Ատլետիկոյի» ուրուգվայցի հարձակվող Դիեգո Ֆոռլանը (15,8 տոկոս), Անդրես Ինիեստան («Բարսելոն», 10,8), Դիեգո Միլիտոն («Ինտեր», 1,2), Դավիթ Վիլյան («Բարսելոն», 1,1), Իկեր Կասիլյասը («Ռեալ», 0,9), Սամուել Էտո՛Օ-ն («Ինտեր», 0,5) եւ Արիեն Ռոբենը («Բավարիա», 0,4):

Աշխարհի լավագույն մարզչի մրցանակը կհանձնվի պորտուգալացի Ժոզե Մոուրինյուին, որի գլխավորությամբ իտալական «Ինտերը» դարձավ չեմպիոնների լիգայի հաղթող: Քվեարկության արդյունքում նա ստացել է ձայների 48,3 տոկոսը: Մոուրինյուն զգալիորեն առաջ անցավ Իսպանիայի հավաքականի գլխավոր մարզիչ Վիսենտե դել Բոսկեից, որին իրենց ձայնն են տվել հարցման մասնակիցների 26,6 տոկոսը: Եռյակը եզրափակել է Ուրուգվայի հավաքականի գլխավոր մարզիչ Օսկար Տաբարեսը (5,2 տոկոս):

Լավագույն տասնյակում ընդգրկվել են նաեւ Յոահիմ Լյովը (Գերմանիա, 3,3 տոկոս), Խոսեպ Գվարդիոլան («Բարսելոն», 2,5), Հարի Ռեդնապը («Տոտենհեմ», 2,4), Բերտ վան Մարվեյկը (Հոլանդիա, 2,3), Լուիս վան Գալը («Բավարիա», 2,2), Ռիկի Հերբերտը (Նոր Զելանդիա, 2,1), Կառլո Անչելոտին («Չելսի», 1,9):

Աշխարհի լավագույն թիմ է ճանաչվել Իսպանիայի ազգային հավաքականը (63,3 տոկոս): Լավագույն եռյակում են նաեւ «Ինտերը» (16,5) եւ «Բարսելոնը» (5,3):

Լավագույն երիտասարդ ֆուտբոլիստի մրցանակին է արժանացել Մյունխենի «Բավարիայի» եւ Գերմանիայի հավաքականի հարձակվող Թոմաս Մյուլլերը (45,8 տոկոս): 2-րդ տեղում ներկայումս Մադրիդի «Ռեալում» հանդես եկող Գերմանիայի հավաքականի մեկ այլ ֆուտբոլիստ է՝ Մեսութ Օզիլը (27,2): Եռյակը եզրափակում է «Տոտենհեմի» պաշտպան Գարեթ Բելը (8,5):

Աղջիկում վճռորոշ մրցախաղերն են

Թուրքիայում ընթացող շախմատի աշխարհի կանանց առաջնությունում կայացան կիսաեզրափակիչի առաջին հանդիպումները: Չինացի շախմատիստուհիներ Ռուան Լուֆեյի եւ Ջիաո Սյուեի մրցավեճն ավարտվեց ոչ-ոքի: Իսկ Հոու Յիֆանը սպիտակներով հաղթեց Համպի Կոներուին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2010թ. դեկտեմբեր ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ

2010 թ. դեկտեմբերի 7-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահի տեղակալ Վաչե Գաբրիելյանը, խորհրդի անդամներ Ամալյա Սարիբեկյանը, Անդրանիկ Նորեկյանը, Ահարոն Չիլինգարյանը, Աշոտ Մկրտչյանը, Վախթանգ Աբրահամյանը:

Խորհրդի նիստը սկսվեց իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ, որտեղ քննարկվեցին գնածի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային եւ դրամավարկային հատվածների ընթացիկ զարգացումները: Նոյեմբերին արձանագրված 12-ամսյա 9.6% գնածի 7.5 տոկոսային կետը պայմանավորվել է պարենային ապրանքների գների աճով:

Նոյեմբերին արձանագրված 12-ամսյա 9.6% գնածը շարունակում է պայմանավորվել ներքին գյուղատնտեսական պարենային ապրանքների գների աճով (նոյեմբերին նախորդ ամսվա նկատմամբ նվազումն ընդհանուր գնածին՝ 4.7 տոկոսային կետ), ինչպես նաեւ ներմուծվող պարենային ապրանքների գների աճով (նոյեմբերին՝ շուրջ 2 տոկոսային կետ)՝ հիմնականում հացամթերքի գների վրա ազդեցության միջոցով: Նոյեմբեր ամսվա գնածը եւս հետեւանք է նշված պարենային ապրանքների գների աճի, որոնց ավելացել են նաեւ կաթնամթերքի, կենդանական եւ բուսական յուղի, շաքարավազի գնածները:

Արդյունքում, ըստ պաշտոնական վիճակագրության 2010 թ. նոյեմբերին արձանագրված 1.6% գնածի 1.7 տոկոսային կետը պայմանավորվել է պարենային ապրանքների գների 3.1% աճով: Ոչ պարենային ապրանքների գներն ավելացել են 0.5%-ով՝ 0.1 տոկոսային կետ նոյեմբերի համեմատությամբ, ծառայությունների սակագները նվազել են 0.3%-ով՝ կրկին 0.1 տոկոսային կետ նոյեմբերի համեմատությամբ:

2010 թ. երրորդ եռամսյակում շարունակվել է տնտեսական աճի տեմպերի դանդաղումը, որի պարագայում հունվար-հոկտեմբերին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ արձանագրվել է 2.4% տնտեսական աճ: Ընդ որում, արագացել է արդյունաբերության ճյուղի ավելացված արժեքի աճը եւ կազմել 10%՝ պայմանավորված մետաղական հանքաքարերի արդյունահանման, սննդամթերքի, խմիչքների, շինանյութերի, քիմիական արդյունաբերության, մետալուրգիայի եւ ոսկերչական արտադրատեսակների արտադրության ծավալների աճով: Արագացել է նաեւ շինարարության ճյուղում ավելացված արժեքի աճը եւ կազմել 3.1%: Ծառայությունների ոլորտում աճի տեմպը դանդաղել է, կազմելով 4.9%: Շարունակվել, սակայն նախորդ ամսվա համեմատությամբ փոքր-ինչ դանդաղել է գյուղատնտեսության ճյուղի անկումը, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 16.7%, ընդ որում, բուսաբուծության ենթաճյուղի անկումը կազմել է 23%. իսկ անասնաբուծության ենթաճյուղինը՝ 2.5%:

Ինչ վերաբերում է արտաքին առեւտրաշրջանառությունը բնութագրող ցուցանիշներին, գրեթե պահպանվել է արտահանման ծավալների աճի տեմպը, որը 2010թ. հունվար-հոկտեմբերին նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 41.3%: Արտահանման աճի տեմպը շարունակել է դանդաղել եւ նշված ժամանակահատվածում կազմել է 16.7%:

Ներկայացվեցին նաեւ ֆինանսական շուկայի զարգացումները: Նոյեմբերին ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի անփոփոխ մակարդակի պայմաններում ՊՊ առաջնային շուկայում նախորդ ամսվա համեմատ արձանագրվել է տոկոսադրույքների նվազում. մասնավորապես՝ մինչեւ 1 տարի մարման ժամկետով պարտատոմսերի միջին տոկոսադրույքը նվազել է 0.87 տոկոսային կետով եւ կազմել 9.02%: Ռեպո շուկայում միջին տոկոսադրույքը չնչին նվազել է եւ կազմել 7.48%: Միջբանկային ռեպո շուկայում տոկոսադրույքը նույնպես նվազել է եւ կազմել 6.59%: Արտարժույթի շուկայում ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի անվանական փոխարժեքը հոկտեմբերի միջինի համեմատ արժեզրկվել է 0.3%-ով եւ կազմել 361.4 դրամ, եվրոյի նկատմամբ արժեքավորվել 0.3%-ով՝ կազմելով 494.36 դրամ, ՌԴ ռուբլու նկատմամբ արժեքավորվել է 1.7%-ով՝ կազմելով 11.67 դրամ:

Տարեսկզբից ԿԲ եւ Կառավարության համատեղ ադադրլարայնացման միջոցառումների արդյունքում դոլարայնացման մակարդակը շարունակել է նվազել. նոյեմբերին նախորդ ամսվա նկատմամբ, նվազումը կազմել է 0.8% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ՝ 3%)՝ պայմանավորված դրամային ավանդների 3.8% եւ արտարժութային ավանդների 1.6%-ով աճերով (բացառելով դրամի փոխարժեքի արժեքավորման ազդեցությունը՝ 0.8%-ով): Չնայած դոլարիզացիայի տեմպերի շարունակական նվազմանը, նոյեմբերին տնտեսության վարկավորման ընդհանուր ծավալում շարունակել են գերակշռել արտարժույթով վարկերը, ինչը տեղի է ունեցել առեւտրային բանկերի կողմից արտերկրից ներգրավված միջոցների, ինչպես նաեւ ԿԲ-ում արտարժութային թղթակցային հաշվի ավելցուկային միջոցների հաշվին: Ամսվա ընթացքում վարկավորման 1.7% աճի դեպքում դրամային ավանդներն ավելացել են 0.9%-ով, արտարժութային վարկերը 2.2%-ով (բացառելով դրամի փոխարժեքի փոփոխությունը՝ 1.4%-ով):

Իրավիճակային հաշվետվության քննարկումից հետո խորհուրդը սկսեց քննարկումներն արտաքին եւ ներքին զարգացումների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ:

Նոյեմբերին արտաքին հատվածի զարգացումները հիմնականում պայմանավորված էին ԱՄՆ Դաշնային պահուստային համակարգի կողմից ծավալային ընդլայնման քաղաքականության երկրորդ փուլի մեկնարկով, Եվրոգոտում պարտքային հիմնախնդիրների սրմամբ եւ նշվածի ներքո միջազգային արտանետային շուկաներում գների էական տատանողականությամբ: Ամսվա ընթացքում միջազգային արտանետային շուկաներում շարունակվել է պահպանվել գնածային միջավայրը, որը շարունակաբար արտացոլվելու է ՀՀ տնտեսությունում:

Ավելին, ՀՀ-ում արձանագրված բարձր գնածի երկրորդային ազդեցությունների դրսեւորումները եւ գնածային սպասումներն ավելանում են, որոնք էական են դառնալու առաջիկայում ՀՀ տնտեսությունում գնածային միջավայրի ձեւավորման առումով: Եվ չնայած ՀՀ տնտեսության ներքին զարգացումներով պայմանավորված համախառն պահանջարկի վերականգնումը դեռեւս լրացուցիչ գնածային ճնշումներ չի ստեղծում, այդուհանդերձ, տնտեսության զարգացումների վերը նկարագրված հեռանկարում եւ նախանշված ռիսկերի նույն տեմպերով դրսեւորման պարագայում, էապես փոխվում է հավանականությունը, որ գնածը կանխատեսվող ժամանակային հորիզոնում կգտնվի նպատակային միջակայքի սահմաններում:

Գնածի՝ նպատակային միջակայքի վերին սահմանն էապես գերազանցելու պայմաններում ԿԲ խորհուրդը քննարկեց դրամավարկային քաղաքականության հետագա ուղղություններին երկու տարբերակ:

Քննարկված առաջին տարբերակը մոտակա ամիսներին դրամավարկային պայմանների խստացումն է, չնայած գնածի՝ առաջարկի գործոններով պայմանավորված լինելու փաստին: Այսպիսի քաղաքականության նպատակը առաջարկի գործոններով պայմանավորված գնածի երկրորդային ազդեցությունների եւ սպասումների չեզոքացումն է: Սա հնարավորություն կտա ավելի կարճ ժամանակահատվածում վերադարձնել գնածը նպատակային միջակայք: Կարճատեւ ժամանակահատվածում հնարավոր է տնտեսական ակտիվության ներկայումս գրանցվող դանդաղման շարունակություն, ֆինանսական միջնորդության ածի տեմպերի անկում, սակայն նման քաղաքականությունը երկարատեւ ժամանակահատվածում օպտիմալ միջավայր կստեղծի կայուն տնտեսական աճի արձանագրման համար: Առաջնահերթն այս պարագայում գնածի կայուն եւ ցածր մակարդակի ձեռքբերումն է կարճատեւ ժամանակահատվածում:

Երկրորդ տարբերակը, որն, ըստ էության, նախորդ ամիսներին իրականացրած քաղաքականության շարունակությունն է, ավելի հայեցողական է: Այսպիսի քաղաքականության ներքո ԿԲ-ն ավելի պահպանողական է տոկոսադրույքի փոփոխության հարցում: Նման քաղաքականության իրագործումը ներկայումս ձեւավորված տոկոսադրույքների պահպանման, վարկավորման ծավալների աճի շարունակման, հետեւաբար՝ ներդրումների ավելացման պայմաններում կնպաստի կարճաժամկետ հատվածում տնտեսական աճի կայունացմանը: Այս կողմից չի բացառվում, որ հաջորդ տարի դիտվեն գյուղատնտեսական պարենային ապրանքների ավելի բարենպաստ գնային փոփոխություններ եւ արտաքին գնածային ազդակները թույլ դրսեւորվեն՝ ձեւավորելով ավելի մեղմ գնածային միջավայր: Այնուամենայնիվ, երկար ժամանակահատվածում պահպանվող բարձր գնածի նվազեցումն հետագայում ավելի ծախսատար կլինի՝ պահանջելով ավելի կոշտ դրամավարկային քաղաքականության եւ ապադոլարայնացման ավելի կոշտ միջոցառումների իրականացում:

Հաշվի առնելով վերոնշյալը, ինչպես նաեւ համախառն պահանջարկի վրա դրամավարկային քաղաքականության ազդեցության լագերը, առաջարկի գործոնների գերակայության եւ գնածի վրա դրանց երկրորդային ազդեցությունների ուժգնացման պարագայում, այս պահին ԿԲ խորհուրդն ավելի հավանական է համարում հետագայում դրամավարկային պայմանների խստացումը:

2010 թ. դեկտեմբերի 7-ի նիստում առաջիկա ժամանակահատվածի համար սահմանվեցին ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքի 7.25%, լոմբարդային ռեպոյի 10.25% եւ ներգրավված միջոցների 4.25% մակարդակներ:

«Էկոնոմիկա եւ Իրավունք» ամսագիր

Ինչպես անթերի վարել հաշվապահությունը եւ խուսափել հաշվապահական, հարկային եւ իրավաբանական սխալներից

▼ Օրենսդրական նորություններ - Պարզաբանումներ մն Խորհրդատվություն

▼ «Էկոնոմիկա եւ Իրավունք» - ամսագիր ղեկավարների եւ մասնագետների համար

Բաժանորդագրվելու համար զանգահարեք 54-24-81, 54-74-81

ՆՈՐ ԱՆՁՆԱԳՐԵՐ

Աշնանից կսկսվի կենսաչափական անձնագրերի ներդրումը

Երեկ «Հենարան» մամուլի ակումբում ՀՀ ոստիկանության անձնագրային եւ վիզաների վարչության պետ **Նորայր Մուրադխանյանը** բացատրություններ տվեց կենսաչափական անձնագրերի ներդրման կարգի մասին:

Այն հարցին, թե ինչո՞վ է օգտակար այդ նոր համակարգը, պրն Մուրադխանյանը շեշտեց. «Դրանով բարձրացվում է անձնագրերի հուսալիությունը, պաշտպանվածությունը եւ հեշտացվում է քաղաքացիների նույնականացումը սահմանային կետերում, արագացվում է սպասարկումը: Նույնականացման քարտը, որը նախատեսված է ներքին գործածության համար (հանրապետության ողջ տարածքում) պարունակելու են քաղաքացու անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան թիվը, վայրը, լուսանկարը եւ երկու ցուցամատերի մատնահետքերը, իսկ կենսաչափական անձնագրերը նույնականացված քարտերը պարտադիր են երկրից դուրս գալու համար, ավելի հեշտացված համակարգով: Բայց դա չի նշանակում, որ գործող անձնագրերը չեն գործելու սահմանից դուրս: Նոր համակարգը կներդրվի սեպտեմբերից, բայց միաժամանակ բոլոր գործող անձնագրերը ուժի մեջ են լինելու: Բացի դրանից, նախատեսվում է նաեւ որոշ ժամանակ զուգահեռ, ըստ քաղաքացու ցանկության, տալ այսօրվա նմուշի անձնագիր:

Պրն Մուրադխանյանը շեշտեց. «Այնպես չի, որ բոլորը պարտադրված պետք է փոխեն անձնագիրը ինչ-որ ժամանակահատվածում, դա թողնվել է քաղաքացու հայեցողությանը եւ երբ նա ցանկանա, կարող է ստանալ նոր նմուշի անձնագիր: Նույնականացման քարտը պարտադիր է բոլոր նրանց, ում 16 տարին լրացել է եւ ստանալու համար վճարվում է միայն բազային տուրք 1000 դրամ: Իսկ անձնագրի գումարը, կենսաչափական տվյալներով, պարզ կլինի մոտակայքում հաղթած կազմակերպության ներկայացրած թվից: Նույնականացման քարտը կլինի բազմաֆունկցիոնալ, ապահովված հատուկ չիպով ու անվտանգության շերտով, տվյալների նույն պարունակությամբ, միայն մատնահետքերի փոխարեն կլինի քաղաքացու էլեկտրոնային ստորագրությունը, որը կհեշտացնի շատ գործարքներ: Նոր կենսաչափական անձնագրերը տրվում են 5 տարվա համար, նույնականացված քարտը՝ 10 տարով: Նոր համակարգը ինտեգրվելու է այսօրվա գործող համակարգին եւ անձնագրերի եւ նույնականացման քարտը՝ կբավարարեն այսօրվա պահանջները, իրենց պաշտպանվածությամբ, հուսալիությամբ եւ որակով», նշեց պրն Մուրադխանյանը:

Քաղաքացին կենսաչափական անձնագիր ստանալու համար առաջին հերթին պետք է նույնականացման քարտ ստանա, որից հետո նոր նրան կտրվի կենսաչափական անձնագիր երկրից դուրս գալու համար: Ներկայումս գործող անձնագրերը ուժի մեջ են մինչեւ ժամկետի սպառումը եւ եթե դրանից հետո քաղաքացին չցանկանա նոր կենսաչափական անձնագիր ունենալ, ապա դա պարտադիր չէ, այլ կամովին: Արտերկրում ապրող ՀՀ քաղաքացիների համար նույն կարգն է գործում եւ գործառույթները իրականացվելու են դեսպանատների միջոցով: Բոլոր անձնագրային կետերում եւ սահմանային կետերում տրվում է եռալեզու թերթիկ, որի միջոցով մարդիկ (090)00909 եւ (090) 007007 հեռախոսահամարներով կտեղեկանան բոլոր մանրամասներին: Իսկ 53-70-22 թեժ գծով կարելի է բոլոր հուզող հարցերի պատասխանն ստանալ:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

«Նախիրը» տալիս է պարտքերը

Հայաստանի Հանրապետության նախագահի հանձնարարականի կատարման ուղղությամբ ձեռնարկված աշխատանքների շնորհիվ դեկտեմբերի 17-ին մարվել է «Նախիրհ գործարան» ՓԲԸ աշխատակիցների նկատմամբ կուտակված պարտքի մոտ 65 տոկոսը:

Աշխատավարձի գծով պարտքի մնացած մասը կմարվի հաջորդ շաբաթվա ընթացքում:

«Նախիրհ գործարան» ՓԲԸ հասարակայնության եւ ՁԼՄ-ների հետ կապերի ծառայություն

ԼՈՒՍԱՆԿԱՐ

www.accea.info

Ժան եւ Ալբերտ Պողոսյան

2011-ին

ՆՈՐԱՐԱՐ ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԿԵՆՏՐՈՆԸ

Հանդիսացնում է

Հունվար	ՊԱՐԱՊ ՎԱԽՏԻ ԽԱՂԱԼԻՔ
Փետրվար	Խմբական ցուցահանդեսը շարունակվում է
Մարտ	ՆԱՐԻՆԵ ՋՈՒՅԱՆ անհատական ցուցահանդես
Ապրիլ	ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԱՐՎԵՍՏԻ ՓԱՌԱՏՈՆ խմբական ցուցահանդես
Մայիս	ԱԹԻԼԱ ԴՈՒՐԱՔ (լուսանկարիչ/Թուրքիա)
	ՄԵԿ ԿԱԴՐ - ՄԵԿ ՐՈՊԵ Համաշխարհային վիդեո/Կինո Փառատոն
Հունիս	Ընթացքի մեջ է
հուլիս	Ընթացքի մեջ է
օգոստոս	ՍՈՆԻԱ ՊԱԼԱՍԱՆՅԱՆԻ հեղինակային, տարեկան խմբական ցուցահանդես
Սեպտեմբեր	ԼԻԶԱ Մ. ՇԹԻԲՈՐ (Գերմանիա) Ինստալացիա եւ նկարչություն
Հոկտեմբեր	ՔԱՂԱՔԱԿԻՐԹ ՀԱՍԱՐԱԿԱՐԳ խմբական ցուցահանդես, համադրող՝ Է. Պալասանյան
Նոյեմբեր	ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ խմբական ցուցահանդես համադրող Վիգեն Գալստյան (Ավստրիա)
	ՄԵԿ ՔԱՌԱԿՈՒՍԻ ՄԵՏՐ Փորձառական թատրոնի փառատոն
Դեկտեմբեր	Ընթացքի մեջ է

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՈՒՏՔՆ ԱԶԱՏ Է

Այցելություն ամեն օր բացի կիրակի եւ երկուշաբթի, ժամը 11:00-17:00

Փավստոս Բյուզանդի 1/3 (Վերնիսաժի հարավ) հեռ. 568225

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝17.12.2010, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: